



Հաստատված է
«ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական ՍՊԸ
Խորհրդի 11.02.2011թ. թիվ 11 որոշմամբ

ԳՈՒՅՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

(Ակտիվի դաս՝ Հրապարակային)



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱՏԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 3

ԲԱՏԻՆ 2. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՀՐԳԵՀԻՑ, ԿԱՅԾԱԿԱՆԱԿՐՈՒԹՅՈՒՆԻՑ, ՊԱՅԹՅՈՒՆԻՑ, 3

ԹՈՂՈՂ ՍԱՐՁԵՐԻ ՎԱՅՐ ԸՆԿՆԵԼՈՒՑ ԿԱՄ ԴՐԱ ՀԵՏ ԲԱԽՈՒՄԻՑ 3

ԲԱՏԻՆ 3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՓՈԹՈՐԻԿԻՑ ԵՎ ԿԱՐԿՈՒՄԻՑ 4

ԲԱՏԻՆ 4. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԱՅԼ ՏԱՐԵՐԱՅԻՆ ԱՂԵՏՆԵՐԻՑ 5

ԲԱՏԻՆ 5. ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ, ԶԵՆՈՒՑՄԱՆ, ԿՈՅՈՒՂՈՒ ԵՎ ՀԱՄԱՆՄԱՆ ԱՅԼ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԶՐԻ ՊԱՏՃԱՌԱԾ ՎՆԱՄՆԵՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ 6

ԲԱՏԻՆ 6. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՑԱՅՏԱԶՐՄՈՒՂԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԵՎ ԶՐԱՔԱՍԵ ԽՈՂՈՎԱԿՆԵՐԻ ԶՐԻ ՊԱՏՃԱՌԱԾ ՎՆԱՄՆԵՐԻՑ 6

ԲԱՏԻՆ 7. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԿՈՏՐԱՆՔԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՈՂՈՒԹՅՈՒՆԻՑ, ԿՈՂՈՊՈՒՄԻՑ, ԱՎԱԶԱԿՈՒԹՅՈՒՆԻՑ 7

ԲԱՏԻՆ 8. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԳՈՒՅՔԻ ՎՆԱՄՍԱՆՆ ԵՎ ՆՈՒՂՈՒՄԻՑ ԵՐՐՈՐԴ ԱՆՁԱՆՑ ԿԱՆԽԱՄՍԱԾՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ 8

ԲԱՏԻՆ 9. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎՐԱԵՐԹԻՑ, ԾԵԽ ԱԶԳԵՑՈՒԹՅՈՒՆԻՑ ԵՎ ՉԱՅՆԱՅԻՆ ՀԱՐՎԱԾԻՑ 8

ԲԱՏԻՆ 10. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԱՊԱԿԻՆԵՐԻ, ՀԱՅԵԼԻՆԵՐԻ ԵՎ ՑՈՒՑԱՓԵՂԿԵՐԻ ԿՈՏՐՈՒՄԻՑ 9

ԲԱՏԻՆ 11. ԱՐՏԱՔԻՆ ԱԶԳԵՑՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՈՒՄԿԵՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ 9

ԲԱՏԻՆ 12. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՕՔՅԵԿՏ 10

ԲԱՏԻՆ 13. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԾԱԾԿՈՒՅԹԻՑ ԲԱՑԱՈՒԹՅՈՒՆՆԵՐ 10

ԲԱՏԻՆ 14. ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾ ԾԱԽՄԵՐ 11

ԲԱՏԻՆ 15. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ, ԴՐԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՐԿՆՕՐԻՆԱԿԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ 11

ԲԱՏԻՆ 16. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎՐԱՄԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՈՒՄԸ, ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՆՎԱՎԵՐՈՒԹՅՈՒՆԸ 12

ԲԱՏԻՆ 17. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՐԺԵՔ 12

ԲԱՏԻՆ 18. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ, ԴՐԱ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ ՉՎՃԱՐԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ 13

ԲԱՏԻՆ 19. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ 14

ԲԱՏԻՆ 20. ՈՒՄԿԻ ԱՄՏԻՃԱՆԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ 14

ԲԱՏԻՆ 21. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՄԵՐԸ 14

ԲԱՏԻՆ 22. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ ՏԵՐԻ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 15

ԲԱՏԻՆ 23. ՎՆԱՄԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ 17

ԲԱՏԻՆ 24. ՓՈՐՉԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ, ՎՆԱՄԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ 18

ԲԱՏԻՆ 25. ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ 18

ԲԱՏԻՆ 26. ԿՐԿՆԱԿԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ 19

ԲԱՏԻՆ 27. ՈՉ ԼՐԻՎ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ 19

ԲԱՏԻՆ 28. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ԱՅԼ ԱՆՁԻՆ ՓՈԽԱՆՑԵԼԸ 19

ԲԱՏԻՆ 29. ՍՈՒՔՐՈՂԱՅԻՆ 19

ԲԱՏԻՆ 30. ԾԱՆՈՒՑՈՒՄ 19

ԲԱՏԻՆ 31. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ 19



ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1 Գույքի ապահովագրության կանոնները (այսուհետև՝ Կանոններ) մշակված են «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին, ՀՀ քաղաքացիական օրենսգրքին և այլ իրավական ակտերին համապատասխան:
- 1.2 «Նաիրի Ինչուրան» Ապահովագրական Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետև՝ Ապահովագրող) կողմից իրականացվող Գույքի ապահովագրությունը ներառվում է «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ոչ կյանքի ապահովագրության տեսակի «Հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն» և «Գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն» դասերի մեջ:
- 1.3 Օրենքի, այլ իրավական ակտերի և Կանոնների հիման վրա Ապահովագրողը կնքում է գույքի ապահովագրության պայմանագիր և (կամ) ապահովագրության վկայագիր (այսուհետև՝ ապահովագրության վկայագիր և ապահովագրության պայմանագիր հասկացությունների փոխարեն Կանոններում կօգտագործվի «Պայմանագիր» հասկացությունը) իրավաբանական կամ գործունակ ֆիզիկական անձանց հետ (այսուհետև՝ Ապահովադիր):
- 1.4 Պայմանագրով Ապահովագրողը պարտավորվում է Պայմանագրում սահմանված վճարի (այսուհետև՝ ապահովագրավճար) դիմաց Պայմանագրով նախատեսված դեպքի (այսուհետև՝ ապահովագրական պատահարի) ի հայտ գալու պարագայում փոխհատուցել Ապահովադիրին կամ այն անձին, ում օգտին կնքվել է Պայմանագիրը (այսուհետև՝ Շահառու) ապահովագրական պատահարի հետևանքով պատճառված վնասը (ապահովագրական հատուցում) Պայմանագրում սահմանված գումարի (ապահովագրական գումար) շրջանակներում:
- 1.5 Սույն Կանոնների համաձայն, ապահովագրված գույքին պատճառված վնասների հետևանքով Ապահովագրողի կողմից փոխհատուցվող վնասներ ասելով պետք է հասկանալ իրական վնասը, այսինքն՝ ապահովագրված գույքի կործանումը, կորուստը կամ վնասը, ինչպես նաև այն ծախսերը, որոնք Ապահովադիրը կրել է կամ պետք է կրի ապահովագրական պատահարի հետևանքների վերացման համար:
- 1.6 Պայմանագիրը կարող է կնքվել միայն ապահովագրվող գույքի պահպանման մեջ շահագրգռվածություն ունեցող անձի օգտին: Ոչ այդպիսի անձի հետ կնքված Պայմանագիրն առչկին է:
- 1.7 Ապահովադիրը Պայմանագիրը կարող է կնքել նաև այլ անձի օգտին (Շահառու), ով իրավունք կունենա ստանալու ապահովագրական հատուցում:
- 1.8 Կանոնների բոլոր դրույթները, որոնք առնչվում են Ապահովադիրին հավասարապես տարածվում են նաև Շահառուի վրա, եթե դա չի հակասում օրենքին և այլ իրավական ակտերին:
- 1.9 Պայմանագրի կնքումը Շահառուի օգտին չի ազատում Ապահովադիրին Պայմանագրով նախատեսված իր պարտականությունների կատարումից, եթե Պայմանագրով չի նախատեսված, որ Ապահովադիրի պարտականությունները պետք է կատարի Շահառուն:
- 1.10 Կանոնները կցվում են Պայմանագրին՝ հանդիսանալով դրա անբաժանելի մասը և պարտադիր են Ապահովագրողի և Ապահովադիրի համար (այսուհետև՝ նաև Պայմանագրի կողմեր):
- 1.11 Պայմանագրի Կողմերը փոխադարձ համաձայնությամբ կարող են Պայմանագրով նախատեսել Կանոնների առանձին դրույթների փոփոխում, չլիքառում կամ այլ դրույթներ, որոնք չեն հակասում օրենքին և այլ իրավական ակտերին:

ԲԱԺԻՆ 2. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՀՐԴԵՀԻՑ, ԿԱՅՑԱԿՆԱՀԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ, ՊԱՅԹՅՈՒՆԻՑ, ԹՈՉՈՂ ՍԱՐՔԵՐԻ ՎԱՅՐ ԸՆԿՆԵԼՈՒՑ ԿԱՍ ԴՐԱ ՀԵՏ ԲԱՆՈՒՄԻՑ

- 2.1. Ապահովագրողն հատուցում է Ապահովադիրին այն վնասերը, որոնք առաջանում են՝
 - ա) Հրդեհի.
 - բ) Կայծակի հարվածի.
 - գ) Պայթյունի.
 - դ) Օդաչուի կողմից դեկավարվող թռչող սարքի ընկնման կամ դրա հետ բախման, ինչպես նաև դրա մասերի կամ բեռի ընկնելու հետևանքով:
- 2.2. **Հրդեհ:**
 - 2.2.1. Համաձայն Կանոնների «**Հրդեհ**» ասելով հասկացվում է այրում բաց կրակի կամ թույլ վառվող կրակի տեսքով, որը առաջացել է դրա համար հատուկ չնախատեսված տարածքներում կամ տարածվել է այդ չնախատեսված տարածքներից դուրս և ընդունակ է ինքնուրույն տարածվել հետագայում:
 - 2.2.2. «Հրդեհի կողմից պատճառված վնաս» ասելով հասկացվում է ապահովագրված գույքին պատճառված վնասը, որն առաջացել է կրակի ամփիջական ազդեցությունից, բարձր ջերմաստիճանից, հրդեհի հետևանքներից (ծուխ, մուր և այլն), ինչպես նաև հրդեհը հանգցնելու միջոցառումների իրականացման ժամանակ ապահովագրված գույքին հասցված վնասը:
 - 2.2.3. *Հրդեհից ապահովագրության դեպքում Ապահովագրողի կողմից հատուցման ենթակա չեն՝*
 - ա) *ապահովագրված գույքին կրակի կամ բարձր ջերմաստիճանի հասցրած վնասը, որն առաջացել է մշակման կամ վերամշակման կամ այլ (չորացման, եփման, արդուկման, ծխեցման, շոգեցման, տաքացման, տաք մշակման կամ մետաղների ձուլման և այլն) նպատակով նրա վրա կրակի կամ տաքության ազդեցությամբ, այդ թվում այն գույքին պատճառված վնասը, որի միջոցով կամ որի մեջ ստեղծվում են կրակը կամ տաքությունը կամ, որը հատուկ նախատեսված է դրա ծագման, պահպանման, տարածման կամ փոխանցման (վառարան, օդանցք, ջերմափոխարկիչների, DENOX սարքավորումների) համար:*
 - բ) *ապահովագրված գույքին հասցված վնասը, որը առաջացել է բուխարուց կամ վառարանից և այլն, դուրս ընկած կամ վառվող ածուխների խանձման կամ վառման հետևանքով, ծխախոտից կամ ծխամորձից, գողման լամպից, մման առարկաներից կամ խանձվելուց՝ կապված իր համար հատուկ նախատեսված տարածքից կրակի հանկարծակի դուրս գալու հետ, բացի հրդեհի առաջացման դեպքից:*
 - գ) *էլեկտրական սարքավորումներին հասցված վնասը, որն առաջացել է էլեկտրական հոսանքի, ներառյալ՝ կարճ միացումը, հոսանքի ուժի կամ լարման բարձրացումը) հետ կապված, ուղեկցվել է կայծերով կամ տաքությամբ, բացառությամբ բաց կրակի ծագման դեպքերից:*
- Համաձայն Կանոնների էլեկտրական սարքավորումներ ասելով հասկացվում է ցանկացած օբյեկտ, որում իրականացվում է էլեկտրա-էներգիայի արտադրություն, բաշխում, փոխանակում կամ սպառում (այդ թվում՝ էլեկտրական մալուխներ և լարեր):



ԳՈՒՅՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

- էլեկտրաէներգիայի ազդեցության կամ լրացուցիչ բեռնվածքի կամ մթնոլորտային պայմանների ուժի արդյունքում ջերմային ներգործության, այնպիսիք, ինչպիսիք են ստատիկ էլեկտրականությունը, մթնոլորտային լիցքաթափման և այլ համանման երևույթների արդյունքում ինդուկցիան,
- էլեկտրաէներգիայի (էլեկտրամագնիսական իմպուլսի) փոխանցման հետևանքով էլեկտրալարերի կայծակնահարությանը,
- բ) ցանկացած տեսակի պաշտպանող կանխարգելիչների, պաշտպանող անջատիչների, ամպրոպային պարալիչների, շանթարգելների կամ այլ նմանատիպ սարքավորումների դրանց ընթացիկ օգտագործման ժամանակ:

2.3.4. Ապահովագրված գույքին հասցված վնասը, որն առաջացել է կայծակի ազդեցությունից առաջացած գերլարվածության հետևանքով, կարող է ապահովագրվել Կողմերի հատուկ համաձայնությամբ:

2.4. Պայթյուն:

2.4.1. Համաձայն Կանոնների «Պայթյուն» ասելով հասկացվում է սահմանափակ ծավալով, կարճ ժամանակահատվածում, մեծ քանակությամբ էներգիայի անջատման սրբնթաց պրոցես, որն առաջացել է գազի կամ գոլորշու ընդլայնման ձգտման հետևանքով:

2.4.2. Համաձայն Կանոնների ապահովագրված են համարվում կենցաղային կամ արդյունաբերական նպատակների համար օգտագործվող գազի պայթյունը, գոլորշու կաթսաների պայթյունը, գազապահեստարանների, գազամուղ խողովակների, ճնշման տակ աշխատող անոթների կամ այլ նմանատիպ սարքավորումների, ինչպես նաև պայթուցիկ նյութերի պայթյունը:

2.4.3. Ռեզերվուարի (կաթսա, խողովակ և այլն) պայթյուն է համարվում միայն այնպիսի պայթյունը, երբ ռեզերվուարի պատերը մասնատվում են այնպես, որ ռեզերվուարի դրսի և ներսի ճնշումը վայրկենաբար հավասարվում է:

Եթե պայթյունը տեղի է ունենում անոթի ներսում քիմիական փոխակերպումների հետևանքով, ապա անոթին հասցված վնասը հատուցվում է նույնիսկ այն դեպքում, երբ անոթի պատերը չեն մասնատվել կտորների:

2.4.4. Ապահովագրված չի համարվում և Ապահովագրողի կողմից հատուցման ենթակա չէ վնասը, որը հասցվել է՝

- ա) Ապահովագրողի կամ երրորդ անձի կողմից բույլատրված գործունեության սահմաններում կատարված պայթյունի հետևանքով.
- բ) մեքենայական սարքավորումների ներքին այրման խցի ներսում կատարված պայթյունի հետևանքով.
- գ) էլեկտրական կամուտացիոն սարքավորումներին՝ դրանց ներսում գազի ճնշման ուժով.
- դ) արտադրական պրոցեսի սովորական բաղադրիչ մաս կազմող պայթյունների հետևանքով.
- ե) անոթի ներսում ճնշման նվազման հետևանքով (իմպուլզիա).
- զ) հենց ռեզերվուարի պայթյունից (ինչպես սահմանված է Կանոնների 2.4.3. կետում), որն առաջացել է մաշվածությունից, ավելորդ (չափազանց) ծանգրտումից, նստվածքներից կամ պատերին առաջացող այլ նստվածքներից:

2.5. Սույն բաժնով նախատեսված ապահովագրության համաձայն **հատուցման ենթակա չեն ծախսերը**, որոնք ուղղակի կամ անուղղակիորեն կապված են երկրաշարժի, հրաբուխի կամ փոթորիկի հետ, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ ռիսկերի ապահովագրումը նախատեսված է Պայմանագրով:

ԲԱԺԻՆ 3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՓՈԹՈՐԻԿԻՑ ԵՎ ԿԱՐԿՈՒՏԻՑ

3.1. Ապահովագրողն Ապահովագրողին հատուցում է այն վնասները, որոնք ծագել են հետևյալի արդյունքում՝

- ա) Փոթորիկի.
- բ) Կարկուտի:

3.2. «Փոթորիկ» ասելով հասկացվում է 17,2 մ/վ կամ 62 կմ/ժ (Բոֆորտի սանդղակով 8 բալ և ավելի ուժգնությամբ) միջինից բարձր արագությամբ քամի:

Քամու արագությունը պետք է հավաստվի բնապահպանական վիճակի նկատմամբ հսկողություն իրականացնող պետական մարմինների կողմից տրված տեղեկանքով: Եթե այդպիսի տեղեկանք չի կարող տրվել Ապահովագրողից անկախ պատճառներով, ապա համարվում է, որ քամին եղել է բավարար արագությամբ, եթե Ապահովագրողին ապացուցի ստորև նշված պայմաններից գոնե մեկի առկայությունը՝

- ա) ապահովագրության տարածքում կամ դրա շրջակայքում օդային մասսաների շարժը պատճառ է հանդիսացել լավ վիճակում գտնվող շենքի կամ այլ գույքի, որը կարող է շենքին համանման դիմանալ քամու համապատասխան ուժգնությամբ, կործանման կամ վնասման պատճառ:
- բ) լավ վիճակում գտնվող ապահովագրված գույքի կործանումը կամ վնասումը կարող էր տեղի ունենալ միայն փոթորիկի ազդեցությամբ:

Սույն կետի շրջանակներում առաջ քաշված շենքերին վերաբերող բոլոր դրույթները, տարածվում են նաև շինությունների և այլ պահեստարանների վրա:

3.3 «Կարկուտ» ասելով հասկացվում է գնդաձև սառցե կտորների տեսքով մթնոլորտային տեղումներ (կարկտահատ):

3.4. Փոթորիկի կամ կարկուտի հասցրած վնաս ասելով հասկացվում է ապահովագրված գույքին հասցված վնաս, որն առաջացել է՝

- ա) քամու հոսանքի արագության ամփոփանքի մեխանիկական ազդեցությամբ.
- բ) քամու հետևանքով շարժվող (տեղափոխվող) օբյեկտների հետ ուղղակի բախումից.
- գ) ապահովագրված գույքի վրա սառցե մասերի (կարկտահատների) մեխանիկական ազդեցության հետևանքով:

3.5. **Ապահովագրական պատահար չի համարվում և Ապահովագրողի կողմից հատուցման ենթակա չէ հասցված վնասը՝**

- ա) որը առաջացել է ապահովագրված գույքի վրա անձրևի, կարկուտի, ձյան կամ այլ տեղումների ազդեցության հետևանքով, որոնք ներթափանցում են շենքերի բաց պատուհանների կամ այլ անցքերի միջով, եթե միայն այդ անցքերը չեն առաջացել փոթորիկի կամ կարկուտի հետևանքով:
- բ) շարժական գույքին, որը գտնվում է շենքից դուրս, բացի այն գույքից, որը ամրացված է շենքին արտաքին կողմից, (օրինակ՝ ցուցափեղկեր, լյումինացենտային սարքավորումներ, շերտավարագույրներ և այլնապարալիսի սարքավորումներ):

Կողմերի լրացուցիչ համաձայնությամբ շենքից դուրս գտնվող շարժական գույքը (բաց տարածության վրա) կարող է ապահովագրվել «Փոթորիկ» ռիսկից:

- գ) շենքին, որը կառուցվել է շինարարական նորմերի և կանոնների խախտումով կամ շենքին, որը գտնվում է տեխնիկապես վատ վիճակում կամ պահանջում է կապիտալ վերանորոգում, ինչպես նաև այդպիսի շենքում գտնվող գույքին:
- դ) շենքին, որը գտնվում է շինարարության պրոցեսում, չհահագործվող շենքերում, ինչպես նաև այդ շենքի ներսում գտնվող գույքին:

3.6. 72 ժամ անընդմեջ տևած փոթորիկի հասցրած վնասները, դիտարկվում են որպես մեկ ապահովագրական պատահար:

24 ժամ անընդմեջ կամ ընդհատումներով տևած կարկուտի հասցրած վնասները դիտարկվում են որպես մեկ ապահովագրական պատահար:

3.7. Սույն բաժնով նախատեսված ապահովագրությանը համապատասխան հատուցման ենթակա չեն վնասները, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն կապված են՝

- ա) ջրհեղեղի կամ ձյան մեծ զանգվածակույտի հետ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդ ռիսկերի ապահովագրությունը նախատեսված է Պայմանագրով.
- բ) խորտակման հետ:



ԲԱԺԻՆ 4. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԱՅԼ ՏԱՐԵՐԱՅԻՆ ԱՂԵՏՆԵՐԻՑ

4.1. Ապահովագրողն Ապահովադրին հատուցում է այն վնասները, որոնք առաջացել են հետևյալի արդյունքում.

- ա) Չրհեղեղի.
- բ) Երկրաշարժի.
- գ) Հրաբխի ժայթքման.
- դ) Գետնի նստվածքի.
- ե) Սողանքների, փյուզումների.
- զ) Չյան զանգվածակույտի:

Սույն կետի ա)-զ) ենթակետերում նշված ռիսկերից յուրաքանչյուրը համարվում է ապահովագրված, եթե դա ուղղակիորեն նշված է Պայմանագրում:

4.2. Չրհեղեղ

4.2.1. «Չրհեղեղ» ասելով հասկացվում է ապահովագրության տարածքի հանկարծակի ջրով ծածկվելը (ջրի տակ անցնելը), որը հետևանք է գետի, լճի, ծովի կամ այլ բնական կամ արհեստական ջրամբարների ջրի մակարդակի բարձրացման, պատնեշների ճեղքվածքների, սահմանազատող ամբարտակների, ցունամիների, ինչպես նաև հորդառատ անձրևների:

4.2.2. Համաձայն Կանոնների ապահովագրական պատահար չեն համարվում խորտակումը՝

- ա) որը պայմանավորված է քամիներով՝ առաջացնելով ծովից ալիքների տարածում և ջրի մակարդակի բարձրացում՝ գետի բերած ջուրը գետաբերանում մնալու պատճառով (փոթորկալի մակընթացություն),
- բ) վերերկրյա ջրամբարներից ջրի դուրս գալու հետևանքով, որը կարելի էր կանխատեսել ելնելով տեղական պայմաններից (տեղանքի ռելիեֆը, կլիման, ջրի սեզոնային տատանումները և այլն), որոնք հատկանշական են ապահովագրության տարածքի համար:

Համարվում է, որ ջրի ավերից դուրս գալը հնարավոր էր կանխատեսել, եթե վերջին երեսուն տարիներին այդպիսի իրադարձությունները տեղի են ունենում տասը տարիների կտրվածքով միջինում առավել հաճախ, քան մեկ անգամ (Պայմանագրի գործողության սկզբի ամսաթվի դրությամբ):

4.2.3. Չրհեղեղներից ապահովագրության շրջանակներում հատուցման ենթակա չեն վնասները, որոնք առաջացել են՝

- ա) խոնավության հետևանքով առաջացած բորբոսի (փտման, սնկերի) հետևանքով.
- բ) հիմնային ջրերի պատճառով.
- գ) կոյուղային ջրերի արտահոսքի հետևանքով, եթե, իհարկե, դա ջրհեղեղի հետևանք չէ:

4.3. Երկրաշարժ

4.3.1. «Երկրաշարժ» ասելով հասկացվում է ստորգետնյա ցնցումներ և տատանումներ, որոնք պայմանավորված են բնական պատճառներով:

4.3.2. Երկրաշարժի հասցրած վնասները ապահովագրությամբ ծածկվում են, եթե երկրաշարժը գրանցված է ապահովագրության տարածքում իրավասու սեյսմոգրաֆիկ ծառայությունների կողմից և երկրաշարժի ուժգնությունը Ռ-իստերի սանդղակով կազմել է 5 (հինգ) բալ և ավելի:

4.3.3. Երկրաշարժի հասցրած վնասները ենթակա են հատուցման միայն այն դեպքում, եթե Ապահովադիրն ապացուցի, որ ապահովագրված շենքերի նախագծման, կառուցման և օգտագործման ժամանակ անհրաժեշտ կարգով հաշվի են առնվել տեղանքի սեյսմոլոգիական պայմանները, որտեղ տեղակայված են տվյալ շենքերը և շինությունները:

4.4. Հրաբխի ժայթքում

4.4.1. Հրաբխի ժայթքում ասելով հասկացվում է հրաբխի խառնարանից լավայի, մոխրի, տաք գազերի և լեռնային ապարների կտորների ելքը:

4.4.2. Հրաբխային ժայթքումից հասցված վնաս ասելով հասկանում ենք ապահովագրված գույքի վրա հալված լավայի, մոխրի, տաք գազերի կամ լեռնային ապարների կտորների անմիջական ազդեցությունը:

4.5. Գետնի նստվածք

4.5.1. «Գետնի նստվածք» ասելով հասկացվում է գետնի բնական իջեցում բնական խոռոչների վրա (լեռնախոռոչների, ճեղքվածքների):

4.5.2. Ապահովագրական ծածկույթը չի տարածվում մինչև Պայմանագրի գործողության սկիզբը տեղի ունեցած գետնի նստվածքների հետևանքով առաջացած վնասների վրա:

4.5.3. Ապահովագրական ծածկույթը չի տարածվում հետևյալ պատճառներով առաջացած գետնի նստվածքի հետևանքով վնասների վրա՝

- ա) բնահողի սառեցման և հալման հետևանքով.
- բ) բնահողի դինամիկ ներգործության (վիբրացիայի) հետևանքով.
- գ) բնահողի գեր չորացման, դրենաժի (ցամաքեցման) հետևանքով.
- դ) տարբեր տեսակի շինարարական աշխատանքների, մասնավորապես հողի հեռացման, ստորգետնյա հաղորդակցության միջոցների տեղադրման, քանդելու, շենքերի կայստալ վերանորոգման և վերակառուցման հետևանքով.
- ե) պայթեցման աշխատանքներ կատարելու, օգտակար հանածոներ մշակելու, արդյունահանելու հետևանքով.
- զ) բնահողի մերձափնյա և գետային քայքայման (երոզիայի) հետևանքով.
- է) նոր կառույցների նորմալ նստեցման հետևանքով.
- ը) հիմքային ջրերի ազդեցության հետևանքով:

4.5.4. Հողի նստեցման դեպքում ապահովագրությունը չի ծածկում այն վնասները, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն ծագել են՝

- ա) երկրաշարժից.
- բ) հրաբխային ժայթքումից.
- գ) ջրհեղեղից,

բացառությամբ այն դեպքերի, երբ այդ ռիսկերից ապահովագրությունը նախատեսված է Պայմանագրով:

4.6. Սողանք (փյուզում)

4.6.1. «Սողանք (փյուզում)» ասելով հասկացվում է բնահողի բնական սահքը, քարերի և հողակույտերի վայր ընկնելը՝ ներառյալ քարաթափը և ցեխաջուրը:

4.6.2. Սողանքից (փյուզումից) ապահովագրությունը չի ծածկում բնահողը վերականգնելու ծախսերը:

4.6.3. Ապահովագրական ծածկույթը չի տարածվում սողանքից (փյուզումից) առաջացող այն վնասների վրա, որոնք առաջացել են՝

- ա) տարբեր տեսակի շինարարական աշխատանքներից, մասնավորապես հիմնահողի հանումից կամ ստորգետնյա կոմունիկացիաների անցկացումից, շենքերի քանդումից, կայստալ վերանորոգումից կամ վերակառուցումից:
- բ) պայթեցման աշխատանքներ կատարելիս, օգտակար հանածոներ մշակելիս կամ արդյունահանելիս,



- գ) բնահողի մերձափնյա կամ գետային քայքայումից (էրոզիայից),
- դ) նոր կառույցների նորմալ մատեցումից:

4.6.4. Մողանքից (փլուզումից) ապահովագրությունը չի ծածկում վնասները, որոնք ուղղակի կամ անուղղակիորեն կապված են՝

- ա) երկրաշարժի.
- բ) հրաբխային ժայթքման.
- գ) ջրհեղեղի հետ,

բացառությամբ այն դեպքերի, երբ այդ ռիսկերից ապահովագրությունը նախատեսված է Պայմանագրով:

4.7. Չյան մեծ զանգվածակույտ

4.7.1. «Չյան մեծ զանգվածակույտ» ասելով հասկացվում է ձյան կամ սառույցի շարժվող զանգված, որը սահելով իջնում է լեռնալանջից:

4.7.2. Չյան և սառցե զանգվածների մեխանիկական ազդեցության հետ միասին ձյան մեծ զանգվածակույտից ապահովագրությունը ծածկում է նաև ձյան մեծ զանգվածակույտն ուղեկցող օդի ճնշման հասցրած վնասը:

4.7.3. Չյան մեծ զանգվածակույտի ապահովագրությունը չի ծածկում վնասը, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն ծագել է՝

- ա) երկրաշարժի.
- բ) ջրհեղեղի հետևանքով.

բացառությամբ այն դեպքերի, երբ այդ ռիսկերից ապահովագրությունը նախատեսված է Պայմանագրով:

4.8. **Մույն բաժնով նախատեսված ապահովագրությունը չի ծածկում այն վնասները**, որոնք հասցվել են կառուցման պրոցեսում գտնվող շենքին (շինությանը), չշահագործվող շենքին, ինչպես նաև այդպիսի շենքում (շինության մեջ) գտնվող գույքին:

ԲԱԺԻՆ 5. ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ, ԶԵՌՈՒՑՄԱՆ, ԿՈՅՈՒՂՈՒ ԵՎ ՀԱՄԱՆՄԱՆ ԱՅԼ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԶՐԻ ՊԱՏՃԱՌԱՄ ՎՆԱՄՆԵՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

5.1. Ապահովագրողն Ապահովադրին հատուցում է ապահովագրված գույքին այն ջրերի անմիջական ներգործության հետևանքով հասցված վնասները, որոնք անսպասելի և հանկարծակի դուրս են եկել՝

- ա) ջրամատակարարման, կոյուղու, ջեռուցման կամ հովացման համակարգերից,
- բ) Կանոնների 5.1 կետի ա) ենթակետում նշված համակարգերի հետ ստացիոնար կերպով կապակցված սարքից կամ սարքավորումից, ինչպիսին է ծորակը, կափույրը, բաքը, վաննան, ռադիատորը, ջեռուցիչ կաքսան և այլն,
- գ) խողովակի պայթման հետևանքով (սույն կետում համակարգերի և դրանց հետ կապակցված սարքերի վնասվածքների) կամ երրորդ անձի անզգուշության հետևանքով,

Համաձայն սույն բաժնի ջուր ասելով հասկացվում է նաև գոլորշին և ջերմությունը անցկացնող հեղուկները, ինչպիսիք են աղաջուրը, յուղը, խլադագենտները:

5.2. Մույն բաժնում նշված ապահովագրությունը չի ծածկում՝

- ա) Կանոնների 5.1 կետում նկարագրված ջրամատակարարման և այլ նմանատիպ համակարգերին, սարքերին կամ սարքավորումներին հասված վնասները,
- բ) շենքի ներսում խոնավության տեսքով առաջացած վնասները (բորբոս, փտածություն, սունկ),
- գ) ապահովագրված գույքին հասցված վնասները, որոնք հետևանք են տարածքը վանալու, մաքրելու կամ հավաքելու համար նախատեսված ջրի, ինչպես նաև տանիքից հոսած ջրի կողմից վնասման:

5.3. Մույն բաժնում նշված ապահովագրությունը չի ծածկում այն վնասները որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն առաջացել են՝

- ա) կոյուղուց ցանկացած պատճառով ջրի դուրս գալու հետ, որը տարբերվում է կոյուղու խողովակի պայթյունից, կապերից, միացումներից.
- բ) ջրամատակարարման և նման համակարգերի մաշվածքի և կոռոզիայի հետևանքով, եթե նշված համակարգերը պատկանում են Ապահովադրին սեփականության իրավունքով պատկանող շենքերում կամ այնպիսի շենքերում, որոնց օգտագործման համար Ապահովադրը Պայմանագրի ուժով կրում է պատասխանատվություն.
- գ) հրդեհի հանգցման ցայտաջրմուղային համակարգերի կամ ջրաբաշ խողովակներից ջրի դուրս գալուց.
- դ) գետնի մատվածքի կամ սողանքի:

5.4. **Մույն բաժնում նշված ապահովագրությունը չի ծածկում այն վնասները**, որոնք հասցվել են կառուցման գործընթացում գտնվող շենքին (շինությանը), չշահագործվող շենքին կամ այն գույքին, որը գտնվում է այդպիսի շենքում (շինությունում):

5.5. **Մույն բաժնով նախատեսված ապահովագրության համաձայն հատուցման ենթակա չեն այն վնասները**, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն կապված են երկրաշարժի կամ ջրհեղեղի հետ, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ ռիսկերից ապահովագրությունը նախատեսված է Պայմանագրով:

ԲԱԺԻՆ 6. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՑԱՅՏԱԶՐՄՈՒՂԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԵՎ ԶՐԱՔԱՇ ԽՈՂՈՎԱԿՆԵՐԻ ԶՐԻ ՊԱՏՃԱՌԱՄ ՎՆԱՄՆԵՐԻՑ

6.1. Ապահովագրողն Ապահովադրին հատուցում է այն վնասները, որոնք առաջացել են, **ջրատար խողովակներից կամ այլ սարքավորումներից, որոնք հանդիսանում են հրդեհի հանգցման ցայտաջրմուղային համակարգերի կամ ջրաբաշ խողովակների համակարգի մի մասը. խողովակների պայթման (այդ համակարգերում այլ կոռոզվածքների) կամ այդ խողովակների հանկարծակի և առանց անհրաժեշտության միացման հետևանքով ջրի հանկարծակի դուրս գալուց:**

Մույն բաժնում նշված ապահովագրությունը վերաբերում է միայն այն խողովակներին և սարքավորումներին, որոնք բացառապես նախատեսված են նշված հակահրդեհային համակարգերի համար:

6.2. Մույն բաժնում նշված ապահովագրությունը չի ծածկում վնասները, որոնք հասցվել են՝

- ա) անմիջապես Կանոնների 6.1 կետում նշված համակարգին.
- բ) կառուցման պրոցեսում գտնվող շենքին (շինությանը), ինչպես նաև չօգտագործվող շենքին (շինությանը), ինչպես նաև այդպիսի շենքի կամ շինության ներսում գտնվող գույքին:

6.3. **Մույն բաժնով նախատեսված ապահովագրության համապատասխան հատուցման ենթակա չեն վնասները**, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն կապված են՝

- ա) Կանոնների 6.1 կետում նշված համակարգերի թեստավորման, վերանորոգման կամ վերակառուցման հետ.
- բ) շենքի (շինության) վերանորոգման կամ վերակառուցման հետ.
- գ) գետնի մատվածքի կամ սողանքի հետ.
- դ) փտածության, սնկերի կամ բորբոսի հետ:

6.4. **Մույն բաժնով նախատեսված ապահովագրության համաձայն հատուցման ենթակա չեն վնասները**, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն կապված են երկրաշարժի հետ՝ բացառությամբ, այն դեպքերի, երբ այդ ռիսկերից ապահովագրությունը նախատեսված է Պայմանագրով:



**ԳՈՒՅՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ
ԿԱՆՈՆՆԵՐ**

ԲԱԺԻՆ 7. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԿՈՏՐԱՆՔԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՈՂՈՒԹՅՈՒՆԻՑ, ԿՈՂՈՊՈՒՏԻՑ, ԱՎԱԶԱԿՈՒԹՅՈՒՆԻՑ

7.1. Ապահովագրողն Ապահովադրին հատուցում է վնասներ, որոնք հետևանք են՝
ա) **Կոտրանքի միջոցով կողոպուտի,**
բ) **Կողոպուտի կամ ավազակության,**
գ) **Տեղափոխման ժամանակ կողոպուտի կամ ավազակության:**
Տեղափոխման ժամանակ կողոպուտ կամ ավազակություն ռիսկը համարվում է ապահովագրված, միայն եթե դրա մասին ուղղակիորեն նշված է Պայմանագրում:

7.2. Սույն բաժնում նշված ապահովագրությունը տարածվում է միայն հետևյալ ապահովագրված գույքի վրա՝
ա) **Կոտրանքի միջոցով կողոպուտ** ռիսկի համար՝ ապահովագրության տարածքում տեղակայված շինությունների ներսում գտնվող գույք:
բ) **Կողոպուտ կամ ավազակություն** ռիսկի համար՝ ապահովագրության տարածքում գտնվող տարածության, պահեստարանի, նաև ցանկապատված հսկվող տարածությունում գտնվող գույքը,
գ) **Տեղափոխման ժամանակ կողոպուտ կամ ավազակություն** ռիսկի համար՝ Հայաստանի Հանրապետության կամ Պայմանագրով նշված տարածքով տեղափոխվող գույքը:

Կանոնների համաձայն *բնակելի տարածություն* ասելով հասկացվում է շինություն, որը նախատեսված է մարդկանց կամ նյութական բարիքների արտադրական կամ այլ ծառայողական նպատակներով ժամանակավոր տեղավորման համար, կամ բնակելի շենք:

Պահեստարան ասելով հասկացվում է շինություն, նախատեսված նյութական արժեքների ժամանակավոր կամ մշտական պահպանման համար, մասնավորապես՝ չիրկիվող պահարան, շարժական մեքենայի վրա ամրացված խանութ, սառնարան, կոնտեյներ, բանկոմատ, առևտրային ավտոմատ և այլ համանման պահեստարան: Պահեստարանին չեն վերաբերում ցանկապատված տարածությունը, առևտրային կրպակը, ցուցափեղկային վահանակը և այլ ցուցափեղկային սարքավորումները:

7.3. Եթե դա ուղղակիորեն նշված է Պայմանագրում, ապա **Կոտրանքի միջոցով կողոպուտ** (Կանոնների 7.1. կետի ա) ենթակետ) ռիսկի ապահովագրությունը տարածվում է նաև բնակատարածքից դուրս տեղակայված պահեստարանում առկա գույքի վրա:

7.4. Կանոններից համապատասխան **Կոտրանքի միջոցով կողոպուտ** ասելով հասկացվում է այնպիսի հափշտակում, որի դեպքում չարագործը կատարել է ստորև նշված գործողություններից որևէ մեկը՝

- ա) Կոտրանքի միջոցով ներխուժել է նշված տարածք, (այդ թվում միջնորմներում կամ կտորի վրա անցքեր անելով և այլն) կամ ազդավուկի, կեղծ բանալու կամ այլ տեխնիկական միջոցի օգնությամբ (ներառյալ էլեկտրոնայինները): Կեղծ է համարվում այն բանալին, որը պատրաստված է անձի կողմից, որն իրավունք չունի տնօրինել բանալու կրկնօրինակին: Ապահովագրության տարածքում գույքի անհետացման մեկ փաստը բավարար ապացույց չէ այն բանի համար, որ օգտագործվել են կեղծ բանալի:
- բ) Շենքի տարածքում կտորել է պահեստարանը կամ օգտագործել է կեղծ բանալի կամ այլ գործիք դրա բացման համար: Այն տարածությունների համար, որոնք, բացի Ապահովադրից և իր աշխատողներից օգտագործվում են նաև երրորդ անձանց կողմից ծառայողական կամ տնտեսական նպատակներով, ապահովագրական պաշտպանություն ծածկույթ տրամադրվում է միայն այն դեպքում, եթե դա նշված է Պայմանագրում:
- գ) ապահովագրված տարածքում գտնվող փակ տարածությունից առևանգել է այնտեղ գտնվող գույքը՝ գաղտնի ներխուժելով այդ տարածություն, իսկ դուրս գալու համար օգտագործել է Կանոնների 7.4. կետի ա) ենթակետում նշված միջոցներից մեկը:

Այնուհանդերձ, եթե Կանոնների 7.4. կետի գ) ենթակետում թվարկված գործողությունների արդյունքում հափշտակվել է Կանոնների 12.6 կետում նշված գույքը, որը համարվում է ապահովագրված կոտրանքի միջոցով կողոպուտից միայն գույքը հատուկ փակ պահեստարաններում գտնվելու պայմանով, Կանոնների շրջանակներում համարվում է, որ կոտրանքի միջոցով կողոպուտը տեղի է ունեցել միայն այն դեպքում, երբ չարագործը տիրացել է բանալուն ստորև նշված գործողություններից որևէ մեկի միջոցով՝

- Կանոնների 7.4. կետի բ) ենթակետի համաձայն կոտրանքի միջոցով կողոպուտի միջոցով, եթե այն պաշտպանված է կոտրանքից այնպես հուսալի, ինչպես և պահեստարանում, որտեղ գտնվում էր ապահովագրված գույքը.
- կոտրանքի միջոցով կողոպուտ, պայմանով, որ պահեստարանը, որը օգտագործվում էր ապահովագրված գույքը պահպանելու համար, ունի երկու կողպեք, որոնց բանալիները պահպանվում են ապահովագրության տարածքից դուրս գտնվող տարբեր վայրերում,
- ապահովագրության տարածքից դուրս տեղի ունեցած կողոպուտից (ավազակությունից):

դ) ներխուժել է շենքի տարածք իսկական բանալու միջոցով կամ բացել է այնտեղ գտնվող պահեստարանը իսկական բանալու միջոցով՝ պայմանով, որ նա տիրացել է դրան ապահովագրության տարածքում կոտրանքի միջոցով կողոպուտի հետևանքով կամ ապահովագրության տարածքի սահմաններից դուրս գողության (կողոպուտի) միջոցով:

ե) ներխուժել է շենքի տարածք իսկական բանալու միջոցով, որին տիրացել է սովորական գողության հետևանքով, որն իրականացվել է ապահովագրության տարածքից դուրս, պայմանով, որ Ապահովադրին ինքը կամ բանալիները պահպանող անձը թույլ չի տվել անփութություն, որը թույլ կտար հափշտակել տվյալ բանալին:

Եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ, **Կոտրանքի միջոցով կողոպուտից ապահովագրությունը չի տարածվում այն վնասների վրա**, որոնք հասցվել են արտաքին ցուցափեղկի (պատուհանի) մեջ գտնվող գույքին կոտրանքի միջոցով կողոպուտի արդյունքում՝ առանց չարագործի շենք ներխուժելու:

7.5. Ի լրումն Կանոնների 7.4. կետում նշված պայմանների, կոտրանքի միջոցով կողոպուտը (Կանոնների 7.1 կետի ա) ենթակետ) համարվում է տեղի ունեցած միայն այն դեպքում, եթե տվյալ իրադարձության փաստով քննչական մարմինների կողմից օրենսդրությամբ նախատեսված կարգով կայացվել է հանցագործության հատկանիշներով քրեական գործ հարուցելու մասին որոշում:

7.6. Կողոպուտը կամ Ավազակությունը համարվում է տեղի ունեցած, եթե՝
ա) Ապահովադրի կամ իր աշխատողների նկատմամբ նրանց դիմադրությունը կտրելու և ապահովագրված գույքը բռնագրավելու նպատակով կիրառվում է բռնություն.

բ) Ապահովադրի կամ նրա աշխատողները իրենց կյանքին կամ առողջությանը վնաս սպառնալու վտանգի տակ, որը կարող է իրականացվել տեղում, փոխանցում են կամ թույլ են տալիս փոխանցել գույքը ապահովագրության տարածքի շրջանակներում կամ ապահովագրության տարածքին հարող ցանկապատված տարածքի սահմաններում: Եթե ապահովագրության տարածքները մի քանիսն են, ապա կողոպուտ է համարվում գույքի բռնագրավումն այն ապահովագրության տարածքի սահմաններում, որտեղ չարագործի կողմից իրականացվել է այդպիսի սպառնալիք:
Կանոնների 7.6. կետի շրջանակներում Ապահովադրի աշխատողներին են վերաբերում նաև շենքի, ներքին տարածությունների և ապահովագրված տարածքում գտնվող գույքի պահպանության համար անձինք:

7.7. Ի լրումն Կանոնների 7.6. կետում նշված պայմանների, **Կողոպուտը կամ Ավազակությունը** (Կանոնների 7.1. կետի բ) ենթակետ) համարվում է իրականացված միայն այն դեպքում, եթե տվյալ իրադարձության փաստով քննչական մարմինների կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կայացվել է որոշում՝ հանցագործության հատկանիշներով քրեական գործ հարուցելու մասին:

7.8. Տրանսպորտային միջոցի ցանկապատված պահպանվող տարածքում կամ փակ տարածությունում կայանելու ժամանակ **Կողոպուտ կամ Ավազակություն** ռիսկից (Կանոնների 7.1 կետի բ) ենթակետ) ապահովագրության դեպքում ապահովագրությունը միևնույն ժամանակ ծածկվում է տրանսպորտային միջոցին անօրինական ձևով տիրանալն առանց առևանգելու նպատակ հետապնդելու, պայմանով, որ տվյալ



ԳՈՒՅՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

իրադարձությունը համապատասխանում է Կանոնների 7.6 կետին և եթե այդ փաստով օրենսդրությամբ նախատեսված կարգով քննչական մարմինների կողմից կայացվել է որոշում հանցագործության հատկանիշներով քրեական գործ հարուցելու մասին:

7.9. Ի լրումն Կանոնների 7.6 և 7.7 կետերում թվարկված պայմանների, **տեղափոխման ժամանակ կողոպուտից կամ ավազակությունից գույքի ապահովագրության ժամանակ կիրառվում են հետևյալ դրույթները՝**

ա) սույն կետով նշված ապահովագրությունը չի տարածվում բեռների, ներառյալ՝ արժեքները և կանխիկ փողը) մասնագիտացված փոխադրողների կամ ինկասատորների հետ ունեցած պայմանագրերի հիման վրա իրականացվող փոխադրումների վրա, որոնք Ապահովագրի մոտ չեն աշխատում.

բ) Ապահովագրին հավասարեցվում են այլ անձիք, որոնք իրականացնում են փոխադրում նրա հանձնարարությամբ.

գ) փոխադրումն իրականացնում են 18-ից 60 տարեկան առնվազն 2 անձ, որոնք չունեն առողջության լուրջ խաթարումներ.

դ) փոխադրման սկիզբ է համարվում անհապաղ ուղարկելու նպատակով տրանսպորտային միջոցի վրա գույքի բարձրագույն պահը: Փոխադրման ավարտ է համարվում նշանակման վայրում գույքի բեռնաթափման պահը: Փոխադրումն իրականացնող անձը պետք է ընթացիկ փոխադրման սկզբնական և վերջնական վերջնակետ՝ չշեղվելով երթուղուց, եթե այն պայմանավորված չէ ծայրահեղ անհրաժեշտությամբ:

ե) կողոպուտը կամ ավազակությունը համարվում է իրականացված միայն այն դեպքում, երբ գույքը առևանգվել է նույն տեղում, որտեղ կիրառվել է բռնություն կամ բռնության ահաբեկություն: Ապահովագրական ծածկույթը չի տարածվում այն գույքի կորստի վրա, որը հասցվել է չարագործի կողմից սույն ենթակետում նշված տեղից դուրս.

զ) Կանոնների 7.6 կետի բ) ենթակետում նշված դեպքերում կողոպուտը կամ ավազակությունը համարվում է տեղի ունեցած միայն այն դեպքում, եթե եղել է բռնության անհապաղ իրականացման հնարավորություն:

7.10. Տեղի ունեցած իրադարձության վերաբերյալ քրեական գործ հարուցելու մասին պահանջը (Կանոնների 7.5, 7.6, 7.8 կետերի համաձայն) չի հանդիսանում պարտադիր միայն այն դեպքում, եթե քննչական մարմինները օրենսդրության համաձայն մերժել են քրեական գործ հարուցել:

7.11. **Սույն բաժնով նախատեսված ապահովագրության համաձայն հատուցման ենթակա չեն վնասները, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն կապված են՝**

ա) Ապահովագրի կամ նրա բարեկամների կանխամտածված գործողության հետ, եթե Ապահովագրիը հանդիսանում է ֆիզիկական անձ,

բ) Ապահովագրի աշխատակցի կանխամտածված գործողության կամ այն անի կանխամտածված գործողության հետ, որը Կանոնների 7.6 կետի համաձայն համարվում է Ապահովագրի աշխատակիցը, եթե միայն գործողությունը չի կազմակերպվել և իրականացվել այն ժամանակահատվածում, երբ ապահովագրության տարածքը փակ էր այդ անձանց մուտքի համար:

գ) տեղափոխման ժամանակ կողոպուտի և ավազակության հետ (Կանոնների 7.1 կետի գ) ենթակետ), եթե վնասը հասցվել է որևէ անձի կանխամտածված գործողության հետևանքով, որին փոխադրման ժամանակահատվածում հանձնարարված էր գույքի տեղափոխումը կամ նրա պահպանությունը

7.12. **Սույն բաժնով նախատեսված ապահովագրության համաձայն հատուցման ենթակա չեն վնասները, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն կապված են ջրամատակարարման, ջեռուցման, կոյուղու կամ մման համակարգերից ջրի հասցրած վնասի կամ երկրաշարժի հետ, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ ռիսկերի ապահովագրությունը նախատեսված է Պայմանագրով:**

ԲԱԺԻՆ 8. ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾ ԳՈՒՅՔԻ ՎՆԱՍՄԱՆՆ ՈՒՂՎԱԾ ԵՐՐՈՐԴ ԱՆՁԱՆՑ ԿԱՆԽԱՍՏԱԾՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

8.1. Ապահովագրողն Ապահովագրին հատուցում է այն վնասները, որոնք հետևանք են երրորդ անձանց կողմից ապահովագրված գույքի վնասմանը կամ ոչնչացմանն ուղղված գործողությունների կատարման և որոնք օրենսդրության համաձայն կարող են դասակարգվել, որպես՝

ա) **Գույքի կանխամտածված ոչնչացում կամ վնասում.**

բ) **Ավազակություն.**

գ) **Բարբարոսություն:**

Սույն բաժնով նշված ապահովագրությամբ ապահովագրական պատահար չի համարվում և չի հատուցվում ապահովագրված գույքի ոչնչացումն ու վնասումը, որը հետևանք է հանդիսանում այն գործողությունների, որոնք իրավասու պետական մարմինների կողմից դասակարգված են վերջ թվարկվածներից այլ կերպ:

ՀՀ քրեական օրենսգրքում նշված դասակարգումների անվանումները փոփոխվելու դեպքում, դրանք համապատասխանորեն ինքնաշխատ կվերանվանվեն:

8.2. **Սույն բաժնով նշված ապահովագրությամբ չի ծածկվում վնասը, որը պատճառվել է՝**

ա) ապակիներին, հայելիներին, ցուցափեղկերին կամ ապակե այլ իրերին, որոնք կարող են ապահովագրված լինել սույն բաժնի համաձայն.

բ) տրանսպորտային միջոցների վրա երթի հետևանքով.

գ) հափշտակման հետ կապված, որը չի ծածկվում Կանոնների համաձայն:

8.3. **Սույն բաժնով նախատեսված ապահովագրության համաձայն հատուցման ենթակա չեն վնասները, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն կապված են երկրաշարժի հետ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ ռիսկի ապահովագրությունը նախատեսված է Պայմանագրով:**

ԲԱԺԻՆ 9. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎՐԱԵՐԹԻՑ, ԾՆԻ ԱՋՐԵՑՈՒԹՅՈՒՆԻՑ ԵՎ ՉԱՅՆԱՅԻՆ ՀՐԱՎԱԾԻՑ

9.1. Ապահովագրողն Ապահովագրին հատուցում է այն վնասները, որոնք հետևանք են հանդիսանում՝

ա) **Տրանսպորտային միջոցի վրա երթի**

բ) **Ծխի ազդեցության.**

գ) **Չայնային հարվածի:**

9.2. **Տրանսպորտային միջոցի վրա երթը** ասելով հասկացվում է ապահովագրված գույքի կործանում կամ վնասում, որը արդյունք է երկաթուղային կամ ավտոմոբիլային տրանսպորտային միջոցի կամ դրանցով տեղափոխվող բեռի հետ բախման:

Սույն բաժնում նշված ապահովագրությունը չի ծածկում՝

ա) Ապահովագրին, նրա աշխատակիցներին կամ ապահովագրված շենքի սեփականատիրոջը պատկանող տրանսպորտային միջոցի (նրանցով տեղափոխվող բեռի) կողմից պատճառված վնասները: Եթե Ապահովագրիը ֆիզիկական անձ է, ապա սույն կետով սահմանված դրույթները տարածվում են նաև նրա բարեկամների վրա:

բ) վնասները, որոնք տեղի են ունեցել ավտոմոբիլային ճանապարհներով (հասարակական օգտագործման ճանապարհներով) ապահովագրության օբյեկտների տեղափոխման ընթացքում:



9.3. **Ճխի ազդեցության** հետևանքով առաջացած վնաս է համարվում ապահովագրված գույքի ցանկացած վնասումը, որը տեղի է ունեցել ապահովագրության տարածքի սահմաններում տեղակայված տաքացնող, ջեռուցող, չորացնող սարքավորումից կամ սննդի պատրաստման համար նախատեսված սարքավորումից ծխի անսպասելի և ոչ պատշաճ արտահոսքի արդյունքում:

Սույն բաժնում նշված ապահովագրությունը չի ծածկում վերոնշյալ սարքավորումների տեխնիկական անձնագրերի և արտադրողի ցուցումներին համապատասխան դրանց շահագործման կանոնների խախտման արդյունքում առաջացած վնասը:

9.4. Կանոնների համաձայն համարվում է, որ **Չայնային հարված** տեղի է ունեցել միայն այն դեպքում, երբ այն առաջացել է ձայնային արգելքը հատող թռչող սարքի կողմից:

9.5. **Սույն բաժնով նախատեսված ապահովագրության համաձայն հատուցման ենթակա չեն վնասները**, որոնք ուղղակի կամ անուղղակիորեն կապված են երկրաշարժի հետ, բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ ռիսկի ապահովագրությունը նախատեսված է Պայմանագրով:

ԲԱԺԻՆ 10. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԱՊԱԿԻՆԵՐԻ, ՀԱՅԵԼԻՆԵՐԻ ԵՎ ՑՈՒՑԱՓԵՂԿԵՐԻ ԿՈՏՐՈՒՄԻՑ

10.1. Ապահովագրողն Ապահովադրին հատուցում է այն վնասները, որոնք հետևանք են հետևյալ գույքի կորստման՝
ա) պատուհանի կամ դռան ապակի, ապակե պատ, հայելի, ցուցափեղկի կամ պատուհանի և դռան շրջանակի մեջ տեղադրված կամ շենքի, շինության, բնակատեղի կամ այլ անշարժ գույքի կոնստրուկտիվ էլեմենտներ (հարդարանքի, ինտերիերի տարրեր), դրանց ամրակցման տեղերում մոնտաժված նույնատիպ ապակե իրեր,
բ) ապակե դետալներ, նեոնային կամ նույնատիպ այլ լամպերից պատրաստված լուսային կամ գովազդային սարքեր:

Ապահովագրողն ապահովագրական հատուցում վճարում է Կանոնների 10.1 կետում նշված գույքի վնասման դիմաց միայն այն դեպքում, երբ ճեղքն հատում է վնասված ապակու ամբողջ հաստությունը:

10.2. **Ապահովագրությունը չի տարածվում այն շենքի (կառույցի) ապակիներին հասցված վնասի վրա**, որտեղ կատարվում են շինմոնտաժային կամ վերանորոգման աշխատանքներ:

10.3. **Սույն բաժնով նախատեսված ապահովագրության շրջանակներում հատուցման ենթակա չէ վնասը**, որը պատճառվել է՝
ա) ապահովագրված ապակիների պատահական կամ կանխամտածված ներկման արդյունքում,
բ) ապակիների կամ ապակյա իրերի մակերևույթի վնասման (օրինակ՝ քերծվածքի կամ կոտրվածքի) հետևանքով:

10.4. **Սույն բաժնով նախատեսված ապահովագրության համաձայն հատուցման ենթակա չեն վնասները**, որոնք ուղղակի կամ անուղղակիորեն կապված են՝
ա) ապակու և ապակու մասերի, պատուհանի շրջանակի կամ դրանց մշտական ամրացման այլ տեղերից հեռացման կամ ապամոնտաժի հետ,
բ) նոր շենքերի նորմալ նստվածքի հետ:

ԲԱԺԻՆ 11. ԱՐՏԱՔԻՆ ԱՁԴԵՑՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՌԻՍԿԵՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

11.1 Ապահովագրողն Ապահովադրին հատուցում է ապահովագրված գույքին պատճառված վնասի հետ կապված ծախսերը, որոնք արդյունք են վերջինիս վրա արտաքին որևէ վնասաբեր ֆիզիկական գործոնի ուղղակի անկանխատեսելի ներգործության և որոնք տարբերվում են Կանոնների 2-ից 10-րդ կետերում նշված ռիսկերից և միաժամանակ չեն մտնում Կանոնների 11.3 կետում նշված բացառությունների մեջ:

Սույն բաժնի շրջանակներում «վնաս» ասելով հասկացվում է գույքի ֆիզիկական վիճակի ոչ բարենպաստ փոփոխությունը: Վնասը չի համարվում տեղի ունեցած, եթե որևէ թերություն, անկախ այն բանից փոխել է այն գույքի ֆիզիկական վիճակը թե ոչ, գոյություն ունեի դեռևս Պայմանագրի գործողության մեջ մտնելուց առաջ: Գույքի կորուստը, անհետացումը, պակասորդը կամ հափշտակումը, այդ թվում աուդիտորական ստուգումների կամ գույքագրման ժամանակ հայտնաբերվածների, սույն բաժնով նախատեսված ապահովագրությամբ չեն ծածկվում:

«Անկանխատեսելի վնաս» ասելով հասկանում ենք վնաս, որի տեղի ունենալն Ապահովադիրը կամ նրա աշխատակիցները չէին կանխատեսում, ինչպես նաև չէին կարող կանխատեսել իրենց գործունեության իրականացման համար անհրաժեշտ մասնագիտական հմտությունների հիման վրա:

Պայմանագրի շրջանակներում անձնա փոփոխությունները, որոնք չեն նվազեցնի գույքի արժեքը, որպես վնաս չեն դիտարկվում:

11.2. Տեխնիկական կրիչների վրա գտնվող փաստաթղթայնացված տեղեկատվության առնչությամբ ապահովագրական հատուցումը վճարվում է միայն այն դեպքում, երբ տեղեկատվական կրիչների վրայից տվյալների կորուստը, վնասումը կամ փոփոխումը (կառավարման էլեկտրոնային համակարգում, ընդհանուր օգտագործման ծրագրերում) հանդիսանում է տվյալների կրիչին հասցված վնասի արդյունք, որը ենթակա է հատուցման Կանոնների սույն բաժնին համապատասխան:

11.3. **Սույն բաժնով նախատեսված ապահովագրության համաձայն հատուցման ենթակա չեն վնասները**, որոնք ուղղակի կամ անուղղակիորեն կապված են՝

- ա) շահագործման մեջ մտցնելու, հենց շահագործման, տեխնիկական սպասարկման կամ մեխանիկական, էլեկտրատեխնիկական կամ էլեկտրական սարքավորումների վերանորոգման (օրինակ՝ սպասարկող անձնակազմի մեղքով թերություն, չափիչ, կառավարիչ, բաշխիչ կամ կարգավորիչ սարքավորումների փչացումը, ջրի, յուղի կամ քսանյութերի անբավարարությունը) հետ,
- բ) սովորական մաշվածքի կամ հնանալու հետ,
- գ) քայքայման (կոռոզիայի) հետ,
- դ) բնական պայմանների սովորական ազդեցության հետ, որոնք սեզոնային կամ տեղային պայմաններից ելնելով պետք է հաշվի առնվեն,
- ե) գույնի, հոտի կամ քաշի փոփոխության հետ, նստվածքի, իջեցման, բաժանման, կծկման կամ ընդլայնման հետ,
- զ) ներքին փչացման, հոտելու, միկրոօրգանիզմների, կենդանիների կամ բույսերի ազդեցության հետ,
- է) գույքի բնական առանձնահատկությունների հետ,
- ը) էներգիայի մատակարարման կամ կորստի հետ,
- թ) օդային կոնդիցիոնիներին, գույքի ստեղծման և ջեռուցման համակարգերի, ինչպես նաև միկրոկլիմա ապահովող համակարգերի ջարդման, ոչ ճիշտ շահագործման կամ ժամանակավոր կանգնեցման հետ,
- ժ) գեների, գենային մուտացիաների կամ այլ գենային փոփոխությունների գործողությունների հետ,
- ժա) չորացման կամ գերչորացման հետ,
- ժբ) մշակման կամ վերամշակման հետ,
- ժգ) ցանցում դիմադրության տատանումների հետ,
- ժդ) խորտակվելու հետ,
- ժե) խմորման կամ արտաջերմային տարալուծման հետ,
- ժզ) շիկացած հավածքների ճեղքման հետ,
- ժէ) ցանկացած ռիսկի հետ, որոնք Կանոնների 2-ից 10, և 13 բաժիններով նախատեսված կարգով բացառված են ապահովագրական ծածկույթից:



ԳՈՒՅՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

11.4. Կանոնների 11.3 կետի ա) - է) ենթակետերի առնչությամբ հատուցման ենթակա չեն նաև Կանոնների 11.3 կետի ա)-է) ենթակետերում նշված ռիսկերի ուղղակի ազդեցության հետևանքով պատճառված վնասը:

Գույքի այլ խմբերին պատճառված հետագա վնասը ենթակա է հատուցման, եթե այն ուղղակիորեն չի բացառվում սույն բաժնով: Սույն բաժնին համապատասխան դիտարկվում են գույքի հետևյալ խմբերը՝ շենք և շինություն, մեքենա և սարքավորում, ապրանք և պաշար, կահույք և տնտեսական գույք:

11.5. Սույն բաժնով նախատեսված ապահովագրությունը չի տարածվում շինարարության մեջ գտնվող շենքի (շինության), շահագործման մեջ չգտնվող շենքի և դրանց մեջ գտնվող գույքի վրա, որոնք դեռևս չեն տեղադրվել շահագործման համար կամ այն գույքի վրա, որոնք փորձարկում չեն անցել (այսինքն՝ մինչ շահագործման մեջ մտցնելու մասին ակտը ստորագրելը):

ԲԱԺԻՆ 12. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏ

12.1 Ապահովագրության օբյեկտ են հանդիսանում Ապահովադրի՝ գույքի տնօրինումը, տիրապետումը կամ օգտագործումը ներառող գույքային շահերը, որոնք կապված են պատահարի հետևանքով գույքի վնասման, ոչնչացման կամ կորստի հետ:

12.2 Կանոնների հիման վրա կնքված Պայմանագրի համաձայն ապահովագրված կարող են լինել՝
ա) անշարժ գույքն ամբողջությամբ (շենքեր և շինություններ), ինչպես նաև նրանց առանձին ճարտարապետական և կոնստրուկտորական մասեր և տարրեր (շենքերի մասեր, բնակելի և ոչ բնակելի տարածություններ, առանձին նրանց ներքին հարդարումը):

բ) շարժական գույքը (սարքավորումներ, ուժային և այլ մեքենաներ, փոխանցող հարմարանքներ, գույք, պատրաստի արտադրանք, ապրանքներ, հումք, նյութեր և այլն):

12.3 Կանոններին համապատասխան ապահովագրված գույքն այն գույքն է, որը նշված է Պայմանագրում և չի մտնում սույն բաժնի և Կանոնների 2-ից 11-րդ բաժինների բացառությունների մեջ:

12.4 Այն դեպքում, երբ ապահովագրված գույքի յուրաքանչյուր միավորն առանձին չի նշվում Պայմանագրում, այլ նշվում են միայն գույքի խմբերը, որոնք առանձնացվում են դասակարգման հատկանիշներով (օրինակ, մեքենաներ և սարքավորումներ, ապրանքներ և պաշարներ և այլն), ապահովագրված գույքը ասելով հասկանում ենք բոլոր այն առարկաները, որոնք գտնվում են ապահովագրության տարածքում և հանդիսանում են գույքի այդպիսի խմբերի մի մասը, ներառյալ այնպիսիք, որոնք գոյություն են ունեցել Պայմանագրի կնքման պահին և այնպիսիք, որոնք արդյունքում ավելացվել են այդ խմբին, այդ թվում երրորդ անձանց գույքը, որը պահպանության, վերանորոգման կամ այլ նպատակներով փոխանցվել է Ապահովադրին, եթե այն ապահովագրված չէ այլ Պայմանագրով:

Եթե ապահովագրված է համարվում Ապահովադրին պատասխանատու պահպանության, վերանորոգման և այլնի համար փոխանցված գույքը, ապա այն համարվում է ապահովագրված դրա սեփականատիրոջ օգտին, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

12.5 Եթե դա ուղղակիորեն նշված է Պայմանագրում, ապա Կանոններին համապատասխան ապահովագրությունը տարածվում է նաև Ապահովադրի աշխատակիցների և բարեկամների (միայն ֆիզիկական անձ հանդիսացող Ապահովադրի համար) սեփականության վրա, որը սովորաբար կամ Ապահովադրի պահանջով գտնվում է ապահովագրության տարածքում կամ օգտագործվում է վերջինիս տնտեսական գործունեության համար: Այս դեպքում Շահառուներ են հանդիսանում այդպիսի գույքի սեփականատերերը (ֆիզիկական անձիք): Սույն ապահովագրությունը չի տարածվում տրանսպորտային միջոցների, ինչպես նաև Կանոնների 12.6 և 12.8 կետերում նշված գույքի վրա:

12.6 Եթե դա ուղղակիորեն նշված է Պայմանագրում և պայմանով, որ Ապահովադրի կողմից ապահովվել է պահպանման և պաշտպանության պայմանների համաձայնեցումը Ապահովագրողի հետ, ապա ապահովագրությունը տարածվում է նաև հետևյալ գույքի վրա՝

- ա) կանխիկ փող,
- բ) արժեթղթեր, ակցիզային ապրանքանիշեր,
- գ) թանկարժեք և հազվագյուտ հողերի մետաղներ, թանկարժեք քարեր, մարգարիտ և ոսկերչական իրեր,
- դ) նամակահիշեր, կոպեկներ, մեդալներ, դրամական նշաններ, նկարներ, քանդակներ և հավաքածուների այլ առարկաներ կամ առարկաներ, որոնք հանդիսանում են արվեստի ստեղծագործություններ.
- ե) բանկային քարտեր և էքսպրես-վճարման քարտեր:

12.7 Ավտոմոբիլային, երկաթուղային, ջրային և օդային փոխադրամիջոցները հանդիսանում են ապահովագրված միայն վերջիններիս հսկվող ցանկապատված տարածքում կամ փակ տարածքում գտնվելու ժամանակ և միայն, եթե այդպիսի ապահովագրությունը հատուկ նախատեսված է Պայմանագրով:

12.8 Եթե դա ուղղակիորեն նշված է Պայմանագրում, ապա ապահովագրությունը տարածվում է նաև՝
ա) թղթային կամ էլեկտրոնային կրիչների վրա գտնվող ձեռագրերի, նախագծերի և այլ փաստաթղթերի (փաստաթղթայնացված ինֆորմացիա) վրա.

- բ) վիճագրության, գծագրերի, նեգատիվային և պոզիտիվային ժապավենների, վերարտադրության նպատակով ստեղծված կլիշեների վրա.
- գ) մոդելների, մակետների, նմուշների, ձևերի և այլնի վրա.
- դ) տվյալների տեխնիկական կրիչների, կառավարման էլեկտրոնային համակարգերի և ընդհանուր օգտագործման ծրագրերի վրա.
- ե) պահածոյացված (երկար ժամանակ չօգտագործվող) արտադրական սարքավորումների վրա:

12.9 Կանոնների համաձայն ապահովագրության ենթակա չէ գույքը, որը գտնվում է՝
ա) վթարային շինությունում, որտեղ բնակվելը արգելված է համապատասխան մարմինների կողմից.
բ) համապատասխան լիազորված մարմնի կողմից որպես սողանքի, փլուզման կամ այլ տարերային աղետի գոտի հաստատված տարածքում:

12.10 Համաձայն Կանոնների ապահովագրությունը չի տարածվում նաև՝
ա) ջրային ռեսուրսների, հողի, բնահողի և ընդերքից շահաված օգտակար հանածոների վրա,
բ) բույսերի, կենդանիների, միկրոօրգանիզմների վրա,
գ) օֆշորային կառույցների վրա (բաց ծովում և մայրցամաքային շելֆի սահմաններում գտնվող գույք, այդ թվում փարոսներ, նավթային հենահարթակներ և այլն),
դ) պայթուցիկ նյութերի և զինամթերքի վրա,
ե) աղբանոցների վրա,
զ) ատոմային վառելիքի վառվելու ցիկլում օգտագործվող սարքավորումների և այլ գույքի վրա,
է) պետական իրավասու մարմինների կողմից վթարային վիճակում ճանաչված շենքի և շինության, ինչպես նաև այդպիսի շենքում (շինությունում) տեղակայված գույքի վրա:

ԲԱԺԻՆ 13. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԾԱԾԿՈՒՅԹԻՑ ԲԱՅԱՈՒԹՅՈՒՆՆԵՐ

13.1 Ապահովագրական պատահարը Պայմանագրով նախատեսված պատահական դեպք է, որի տեղի ունենալու դեպքում ծագում է ապահովագրական հատուցում վճարելու Ապահովագրողի պարտավորությունը:

13.2 Ապահովագրական պատահար է համարվում ապահովագրված գույքի կործանումը, վնասումը կամ կորուստը, որը հետևանք է Կանոնների 2-ից 11-րդ բաժիններում նախատեսված և Պայմանագրում նշված ռիսկերի գործողության:

13.3 Համաձայն Կանոնների 4-6, 8 և 9 բաժինների ապահովագրական պատահար ասելով հասկացվում է մեկ ապահովագրված ռիսկից 72 ժամվա ընթացքում ծագած վնասները:



13.4 Եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապա ի լրումն Կանոնների 2-ից 11-րդ բաժիններում նշված բազառությունների ապահովագրական պատահար չեն համարվում իրադարձությունները, որոնք ուղղակի կամ անուղղակիորեն կապված են՝

- ա) պատերազմի, զինված ներխուժման, թշնամաբար տրամադրված պետությունների գործողության (անկախ այն բանից, պատերազմ հայտարարված է, թե ոչ), քաղաքացիական պատերազմի, ապստամբության, հեղափոխության կամ խռովության հետ.
- բ) գույքի բռնագրավման կամ ազգայնացման, ռեկվիզիցիայի, քանդման կամ կործանման հետ, որը տեղի է ունեցել պետական կառավարման մարմինների կամ տեղական ինքնակառավարման մարմինների հանձնարարությամբ,
- գ) ահաբեկչության, պատանդներ բռնելու կամ դիվերսիայի հետ.
- դ) գործադուլների, լուկաուտների կամ մասսայական անկարգությունների հետ, եթե Պայմանագրով այլ բան հատուկ նախատեսված չէ.
- ե) Ապահովադրի, ի դեմս ղեկավարի (լիազորված անձի), իրավաբանական անձի այլ մարմնի (Ղեկավարություն, Տնօրինություն) դիտավորության հետ, ինչպես նաև անձանց, որոնք թեկուզ և գործում են իրենց անունից, բայց Ապահովադրի գիտությամբ և նրա հետաքրքրությունների օգտին.
- զ) ցանկացած տիպի աղտոտվածության կամ միջուկային վարակման, քիմիական կամ այլ բիոլոգիական նյութերի և հումքերի ներգործության հետ.
- է) ատոմային էներգիայի, ճառագայթման կամ ճառագայթային վարակման ազդեցության հետ.
- ը) նախագծման, կառուցման, մոնտաժի սխալների, անորակ աշխատանքի կատարման կամ նյութերի ղեֆեկտների (պակասություն) հետ:

ԲԱԺԻՆ 14. ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾ ԾԱԽՍԵՐ

14.1 Ի լրումն ապահովագրական պատահարի վրա հասնելու հետևանքով ապահովագրված գույքին պատճառված վնասի հատուցմանը՝ Ապահովագրողը փոխհատուցում է նաև խելամիտ և նպատակաուղղված ծախսերը, որոնք իրականացրել է Ապահովադիրը՝ նպատակ ունենալով կրճատել այն վնասները, որոնք ենթակա են հատուցման Ապահովագրողի կողմից (փրկման ծախսեր), եթե այդպիսի ծախսերը անհրաժեշտ են եղել կամ իրականացվել են Ապահովագրողի կարգադրությամբ:

14.2 Եթե դա ուղղակիորեն նշված է Պայմանագրում, ապա Ապահովագրողը հատուցում է նաև հետևյալ ծախսերը, որոնք կրել է Ապահովադիրը ապահովագրական պատահար տեղի ունենալու ժամանակ՝

ա) վնասի վայրի մաքրման ծախսեր (ապահովագրական պատահարի ծագման վայրերում), ներառյալ ապահովագրված գույքի մնացած մասերի տեղահանումը, ապահովագրական պատահարի վրա հասնելու հետևանքով առաջացած աղբի դուրս հանումը և այլ մնացորդների մոտակա աղբանոց տանելու և թաղելու, վերացնելու կամ վառելու ծախսերը (մաքրման և կտրման ծախսերը): Եթե տարերային աղետի արդյունքում, Կանոնների 4-րդ բաժնին համապատասխան, ծախսերի վայրը դուրս է գալիս ապահովագրության տարածքից, ապա հատուցվում են մաքրման միայն այն ծախսերը, որոնք վերաբերում են ապահովագրված գույքին,

բ) ծախսեր, որոնք կատարվել են այն բանի հետևանքով, որպեսզի ապահովագրված գույքը բերվի ապահովագրական պատահարից անմիջապես առաջ գտնվելու վիճակին, վերականգնման պրոցեսում կամ նոր գույքի ձեռքբերման համար, ինչպես նաև այլ գույքի տեղափոխման և պաշտպանման ծախսերը: Մասնավորապես՝ տեղափոխման և պաշտպանման ծախսեր ասելով հասկանում ենք մեքենասարքավորումների ղեմնուտաժը կամ կրկնակի մոնտաժը, շենքի տարրերի կտրումը, կործանումը կամ վերականգնումը կամ անցումների ընդլայնումը,

գ) փաստաթղթերով թրթապանակների (ֆայլերի) վերականգնման կամ կրկնակի թողարկման, նախագծերի, գործարար գրքերի, քարտերի, զժազրերի կամ այլ փաստաթղթայնացված տեղեկատվության (փաստաթղթերի), այդ թվում մագնիսային ժապավենների, սկավառակների, դիսկետների կամ ինֆորմացիայի այլ տեխնիկական կրիչների վրա կատարված ծախսեր համապատասխան Կանոնների 17.7.9 կետի՝ ներառյալ հենց տվյալների կրիչների արժեքի հատուցումը: Ցանկացած դեպքում հատուցման ենթակա չեն Ապահովադրի համար այդպիսի փաստաթղթայնացված տեղեկատվության ներքին արժեքը: Եթե տեղեկատվության վերականգնում չի պահանջվում, ապա Ապահովագրողը հատուցում է միայն տեղեկատվության կրիչների արժեքը:

14.3 Եթե դա ուղղակիորեն նշված է Պայմանագրում, ապա Ապահովագրողը հատուցում է Ապահովադրի խելամիտ և նպատակաուղղված ծախսերը, որոնք առաջացել են Կանոնների 7-րդ բաժնին համապատասխան կտրուսների միջոցով կողոպուտի կամ ավազակության հետևանքով և կողպեքի կամ բանալու փոփոխության հետ, բացառությամբ չիրկիզվող պահարանի կամ չիրկիզվող պահարանի սենյակի բանալուց:

14.4 Եթե դա ուղղակիորեն նշված է Պայմանագրում, ապա Կանոնների 10-րդ բաժնին համապատասխան ապակիների կտրման պատահարից ապահովագրության դեպքում, Ապահովագրողը հատուցում է նաև այն ծախսերը, որոնք կապված են՝

- ա) կտրված ապակիների ժամանակավոր փոխարինման հետ այն դեպքում, երբ հնարավոր չէ ապակիները անմիջապես փոխարինել կտրվածներին ամբողջական համանմանների հետ,
- բ) ապակիների փոփոխությանը խոչընդոտող առարկաների (չերտավարագույրներ, վանդակաճաղեր և այլն) մոնտաժի և դեմոնտաժի հետ,
- գ) փայտանյութերի վարձակալության և մոնտաժի հետ, եթե դրանք անհրաժեշտ են բարձր հարկերում ապակիների փոփոխության համար,
- դ) կտրված ապակիների ներկման, նկարագրման, փորագրման կամ այլ զարդարման հետ,
- ե) կտրվածների փոխարեն լուսային գովազդային սարքավորումների մոնտաժով և հավաքմամբ:

ԲԱԺԻՆ 15. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ, ԴՐԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՐԿՆՕՐԻՆԱԿԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

15.1 Պայմանագիրը կնքվում է Ապահովադրի կողմից Ապահովագրողի սահմանված ձևի գրավոր դիմում-հարցաթերթիկի հիման վրա (բացառությամբ Կանոնների 15.3 կետում նշված դեպքի), որում պետք է ամբողջությամբ պարունակվեն ապահովագրության օբյեկտի վերաբերյալ տվյալները և այլ անհրաժեշտ տեղեկատվությունը:

15.2 Ապահովադրի կողմից դիմումում նշված ապահովագրության օբյեկտի վերաբերյալ տվյալները ընդունվում են որպես հանգամանքներ, որոնք էական նշանակություն ունեն ապահովագրական պատահար տեղի ունենալու հավանականության որոշման համար:

15.3 Պայմանագիրն անհրաժեշտության դեպքում կարող է կնքվել Ապահովադրի բանավոր դիմումի հիման վրա, պայմանով, որ Պայմանագրում ընդգրկվեն ապահովագրության օբյեկտի վերաբերյալ պահանջվող տեղեկությունները:

15.4 Պայմանագիր կնքելիս Ապահովադիրը պետք է Ապահովագրողին հայտնի գույքի վերաբերյալ իրեն հայտնի բոլոր այն հանգամանքների մասին, որոնք էական նշանակություն ունեն ռիսկի գնահատման համար:

15.5 Բացի դիմումի ձևով նախատեսված տվյալներից, Ապահովադիրը ՊԱՐՏԱՎՈՐ է տալ նաև Ապահովագրողի կողմից պահանջվող այլ տեղեկատվություն՝ ապահովագրական պատահար տեղի ունենալու հավանականության և այդ պատահարի հետևանքով հնարավոր վնասների չափերի որոշման համար էական նշանակություն ունեցող հանգամանքների մասին:

15.6 Եթե Պայմանագրի կնքումից հետո հաստատվի, որ Ապահովադիրը Ապահովագրողին նախապես հայտնել է Կանոնների 15.1, 15.4 և 15.5 ենթակետերով նախատեսված կեղծ տեղեկություններ, ապա Ապահովագրողը իրավունք ունի Պայմանագիրը համարել անվավեր և կիրառել օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված հետևանքները:



ԳՈՒՅՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

- 15.7 Մինչև Պայմանագիր կնքելն Ապահովագրողը իրավունք ունի իրականացնելու գույքի գնում, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում նշանակել փորձաքննություն գույքի իրական (շուկայական) արժեքը պարզելու համար:
- 15.8 Պայմանագրի կնքման (ապահովագրության իրականացման) փաստը հավաստվում է Ապահովագրողի կնիքով և գործադիր տնօրենի կամ համապատասխան լիազորված անձի ստորագրությամբ Ապահովագրողին կամ նրա լիազորված ներկայացուցչին Պայմանագիր հանձնելու պահից:
- 15.9 Պայմանագրի գործողության ժամկետը նշվում է Պայմանագրում: Սակայն եթե Պայմանագրում գործողության ժամկետ նշված չէ, ապա Կանոնների համաձայն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում՝
- ա) ապահովագրավճարը կանխիկ վճարելու դեպքում՝ Ապահովագրողի կողմից ապահովագրավճարի կամ դրա մի մասի ստացմանը օրը:
 - բ) ապահովագրավճարը անկանխիկ կերպով վճարելու դեպքում Ապահովագրողի հաշվին փոխանցված վճարը մուտք լինելու հաջորդ օրվանից:
- 15.10 Պայմանագիրը ուժի մեջ է մտնում դրանում նշված ապահովագրության ժամկետի սկզբի ամսաթվի 00 ժամ 00 րոպեից և գործում է մինչև ապահովագրության ժամկետի ավարտի ամսաթվի 24 ժամ 00 րոպեին:
- 15.11 Պայմանագրով ապահովագրության ժամկետը սովորաբար սահմանվում է մինչև մեկ տարի տևողությամբ: Ապահովագրողը և Ապահովագրողը կարող են համաձայնության գալ Պայմանագրում ապահովագրության մեկ տարուց ավելի երկար ժամկետ սահմանելու համար:
- 15.12 Եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապա Պայմանագրով պայմանավորված ապահովագրությունը տարածվում է միայն այն ապահովագրական պատահարների վրա, որոնք տեղի են ունեցել՝
- ա) որպես ապահովագրության ժամկետի սկիզբ նշված ամսաթվի 00 ժամ 00 րոպեից, բայց ոչ շուտ, քան Ապահովագրողի կողմից ապահովագրավճարի կամ դրա առաջին մասի վճարման հաջորդող օրվանից,
 - բ) մինչև Պայմանագրում նշված ապահովագրության ժամկետի ավարտի ամսաթվի 24 ժամ 00 րոպեին:
- 15.13 Եթե ապահովագրության ընթացքում ապահովագրված գույքի նկատմամբ տնօրինման, տիրապետման կամ օգտագործման իրավունքը փոխանցվում է այլ անձի, ապա անձը, որին փոխանցվել է ապահովագրված գույքի նկատմամբ իրավունքը, պետք է անհապաղ այդ մասին գրավոր տեղեկացնի Ապահովագրողին: Ապահովագրված գույքն այլ անձի տնօրինմանը, տիրապետմանը կամ օգտագործմանն անցնելու դեպքում, դրանք համարվում են ապահովագրված մինչև Պայմանագրում նշված ժամկետի ավարտը:
- 15.14 Պայմանագրի կորստի դեպքում Ապահովագրողը երկու աշխատանքային օրվա ընթացքում Ապահովագրողին է տրամադրում Պայմանագրի կրկնօրինակը, իսկ Պայմանագրի կորստ օրինակը համարվում է անվավեր և դրանով ապահովագրական հատուցում չի կատարվում:
- 15.15 Եթե ապահովագրավճարի տարածամեկտ վճարման դեպքում Պայմանագրով սահմանված ժամկետում հերթական (սկսած երկրորդից) ապահովագրավճարը չի վճարվի կամ կվճարվի Պայմանագրով նախատեսվածից փոքր չափով, ապա Պայմանագրով նախատեսված ապահովագրությունը չի տարածվի այն ապահովագրական պատահարների վրա, որոնք տեղի են ունեցել Պայմանագրով, որպես վճարման վերջին օր նախատեսված ամսաթվին հաջորդող օրվա 00 ժամ 00 րոպեից մինչև պարտավորության գումարի վճարման ամսաթվի 24 ժամ 00 րոպեին:

ԲԱԺԻՆ 16. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒՑՈՒՄԸ, ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՆՎԱՎԵՐՈՒԹՅՈՒՆԸ

- 16.1 Պայմանագիրը վաղաժամկետ լուծվում է՝
- ա) Ապահովագրողի, եթե այն իրավաբանական անձ է՝ լուծարման, իսկ եթե ֆիզիկական անձ է՝ մահվան դեպքում.
 - բ) Պայմանագրից ապահովագրողի (Շահառուի) վաղաժամկետ հրաժարվելու դեպքում.
 - գ) Պայմանագրով նախատեսված բոլոր պարտավորություններն Ապահովագրողի կողմից կատարելու դեպքում.
 - դ) օրենքով, այլ իրավական ակտերով, Կանոններով կամ Պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:
- 16.2 Պայմանագիրը վաղաժամկետ դադարում է գործել, եթե դրա գործողության մեջ մտնելուց հետո ապահովագրական պատահար տեղի ունենալու հավանականությունը վերացել է և ապահովագրական ռիսկի գոյությունը ընդհատվել է ապահովագրական պատահարից զատ այլ հանգամանքով: Այս դեպքում Ապահովագրողն իրավունք ունի ապահովագրավճարի նկատմամբ՝ ապահովագրության գործած ժամանակահատվածին համամասնորեն:
- 16.3 Ապահովագրողի պահանջով Պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովագրողին են վերադարձվում ապահովագրավճարներն ամբողջությամբ, բացառությամբ Կանոնների 16.4 կետով նախատեսված դեպքի:
- 16.4 Պայմանագիրը կարող է Ապահովագրողի պահանջով վաղաժամկետ լուծվել՝ Ապահովագրողի կողմից օրենքով, այլ իրավական ակտերով, Կանոններով կամ Պայմանագրով նախատեսված իր պարտականությունները չկատարելու դեպքում, որի ժամանակ Ապահովագրողին է վերադարձնում ապահովագրավճարը՝ Պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն, իսկ ապահովագրավճարի հաշվարկման համար որպես հիմք ընդունվում է Պայմանագրի համաձայն Ապահովագրողի կողմից վճարված ապահովագրավճարի 50 տոկոսը, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:
- 16.5 **Ապահովագրողն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրն՝ այդ մասին ոչ պակաս, քան 15 օր առաջ ծանուցելով Ապահովագրողին:**

16.6 Ապահովագրողի (Շահառուի) կողմից Պայմանագրից վաղաժամկետ հրաժարվելու դեպքում՝ վերջինիս վերադարձվում են Պայմանագրի չլրացած ժամկետի համար մուծված ապահովագրավճարը՝ մասնահատելով ապահովագրավճարի 30 տոկոսի չափով գործավարման ծախսերը. եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

16.7 Այն դեպքում, երբ Ապահովագրողի պահանջները պայմանավորված են Ապահովագրողի կողմից Պայմանագրի պայմանների խախտմամբ, ապա վերջինս Ապահովագրողին է վերադարձնում վճարված ապահովագրավճարներն ամբողջությամբ, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

16.8 Պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովագրողին չեն վերադարձվում ապահովագրավճարները, եթե Ապահովագրողը սվյալ Պայմանագրի գծով դիմել է ապահովագրական հատուցում ստանալու համար (բացառությամբ այն դեպքի, երբ ապահովագրական հատուցումը մերժվել է և Ապահովագրողը (Ապահովագրված անձը, Շահառուն) համաձայնվել է Ապահովագրողի կողմից տրամադրված մերժման վերաբերյալ եզրակացության հետ) կամ ստացել է ապահովագրական հատուցում:

16.9 Ապահովագրողի լուծարման դեպքում, վերջինս պարտավոր է Ապահովագրողին վերադարձնել Պայմանագրի չլրացած ժամկետի համար մուծված ապահովագրավճարը:

16.10 Պայմանագիրն առջինը կամ անվավեր է համարվում օրենքով, այլ իրավական ակտերով, Կանոններով կամ Պայմանագրով նախատեսված դեպքերում և կարգով:

ԲԱԺԻՆ 17. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՆ ԳՈՒՄԱՐ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՆ ԱՐԺԵԸ

17.1 Ապահովագրական գումարը Ապահովագրողի և Ապահովագրողի համաձայնությամբ որոշված դրամական արտահայտությամբ գումար է, որի սահմաններում Ապահովագրողը պարտավորվում է վճարել ապահովագրական հատուցում ապահովագրական պատահար տեղի ունենալու ժամանակ:



17.2 Ապահովագրական գումարը չի կարող գերազանցել գույքի իրական (շուկայական) արժեքը: Եթե Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարը գերազանցում է գույքի իրական (շուկայական) արժեքը, ապա Պայմանագիրն առաջինն է ապահովագրական արժեքը գերազանցող գումարի մասով, լրացուցիչ վճարված ապահովագրավճարը ենթակա չէ վերադարձման:

17.3 Եթե Պայմանագրին համապատասխան ապահովագրավճարը մուծվում է տարածամեկտված ձևով և Կանոնների 17.2. կետում նշված պահի դրությամբ այն ամբողջությամբ վճարված չէ, մնացած ապահովագրավճարները պետք է վճարվեն ապահովագրական գումարի նվազմանը համարժեք նվազեցումներով:

17.4 Եթե Կանոնների 17.2. կետում նշված իրադարձությունները, հանդիսացել են Ապահովադրի խաբեության հետևանք, ապա Ապահովագրողն իրավունք ունի պահանջել Պայմանագիրն անվավեր ճանաչել և հատուցել Ապահովագրողին հասցված վնասները՝ Ապահովադրի կողմից ստացած ապահովագրավճարը գերազանցող գումարի չափով:

17.5 Եթե Պայմանագրում սահմանված ապահովագրական գումարը ցածր է գույքի իրական (շուկայական) արժեքից (ոչ լրիվ արժեքով ապահովագրություն), Ապահովագրողը կիրականացնի վնասի հատուցումն այն համամասնությամբ, որը գոյություն ունի ապահովագրական գումարի և գույքի իրական (շուկայական) արժեքի միջև:

17.6 Ապահովագրական արժեք է համարվում ապահովագրության պայմանագրի կնքման պահին տվյալ գույքի իրական (շուկայական) արժեքը: Ապահովագրական արժեքի որոշման համար Ապահովագրության պայմանագրում Ապահովագրողը կարող է հիմք ընդունել հետևյալ արժեքներից որևէ մեկը.

- ա) Ապահովադրի հայտարարված արժեքը,
- բ) Գնահատող կազմակերպությունների կողմից գնահատված արժեքը,
- գ) ապահովագրված գույքի հաշվեկշռային մնացորդային արժեքով:

17.7 Գույքի ապահովագրական (իրական) արժեքը կարող է որոշվել նաև՝

17.7.1 *Շենքի և շինության* համար՝ դրա նախագծային բնութագրերին և շենքի (շինության) շինարարական նյութերի որակին համանման տվյալ տեղանքում շինարարության նախագծային արժեքին՝ նվազեցված դրա մաշվածքի տոկոսի չափով.

17.7.2 *Տարածքի համար՝ ապահովագրված գույքի նշանակությամբ, տարածքով, նախագծմամբ, մաշվածությամբ և ֆիզիկական վիճակով* համանման նույն տեղանքում (բնակավայրում, բնակավայրի շրջանում) գտնվող տարածքի շուկայական արժեքին.

17.7.3 *Շենքի, շինության կամ տարածքի ներքին հարդարման* համար՝ ծավալով և որակով ապահովագրված ներքին հարդարմանը համապատասխանող կրկնակի հարդարման աշխատանքներ տանելու համար անհրաժեշտ ծախսերին (ներառյալ նյութերի արժեքը)՝ մասհանելով մաշվածությունը:

17.7.4 *Մեքենայի և սարքավորման* համար՝ նույն նշանակությամբ և շահագործողական-տեխնիկական բնութագրերով համանման նոր մեքենա և սարքավորումներ ձեռք բերելու արժեքին (ներառյալ փոխադրման, մոնտաժի, մաքսային վճարների և տուրքերի վճարումը, այլ պարտադիր վճարումները)՝ մասհանելով այն գումարը, որով նվազեցել է ապահովագրված մեքենաների և սարքավորումների արժեքը դրանց մաշվածության հետևանքով.

17.7.5 *Կահույքի և ինվենտարի* համար՝ համանման նոր առարկաների ձեռքբերման արժեքին՝ մասհանած դրանց շահագործման հետևանքով առաջացած մաշվածության գումարը.

17.7.6 Ապահովադրի կողմից *արտադրվող ապրանքների* (անավարտ արտադրության և պատրաստի արտադրանքի) համար՝ դրա կրկնակի արտադրության ծախսերին՝ ներառյալ հումքի, կիսաֆաբրիկատների գնման և տրանսպորտային ծախսերը (ֆրախտ, բեռների ապահովագրության ծախսեր, մաքսային վճարներ և տուրքեր), սակայն ոչ բարձր դրա վաճառվող գնից:

17.7.7 Ապահովադրի կողմից հետագայում *վաճառելու նպատակով ձեռք բերված ապրանքների* համար, Ապահովադրի կողմից *գնած հումքի և նյութերի* համար, համանման ապրանքներ ձեռք բերելու գնին՝ ներառյալ տրանսպորտային ծախսերը (ֆրախտ, բեռների ապահովագրության ծախսեր, մաքսային վճարներ և տուրքեր): Այն դեպքում, եթե ապրանքն արդեն վաճառված է (պատրաստի կամ անավարտ), ապա դրա ապահովագրական արժեքը ընդունվում է հավասար դրա շուկայական գնին՝ մասհանելով փաթեթավորման և փոխադրման վրա կատարված ծախսերը:

17.7.8 *Արժեթղթերի* համար՝ դրանց վերաթողարկման և տպագրության ծախսերի գումարին,

17.7.9 *տվյալների կրիչների, կառավարման էլեկտրոնային համակարգերի կամ ընդհանուր օգտագործման ծրագրերի* համար՝ բացառությամբ դրանց մեջ եղած տվյալները՝ տվյալների կրիչների վերականգնման, ծրագրերի ինստալյացիայի (տեղադրման) ծախսերի գումարին (բացառությամբ հենց տվյալների վերականգնման ծախսերը):

17.8 Ապահովագրության պայմանագրում նշված ապահովագրական արժեքը հետագայում չի կարող վիճարկվել, բացառությամբ այն դեպքի, երբ միջև պայմանագիր կնքելն ապահովագրական ռիսկը գնահատելու իր իրավունքից չօգտված Ապահովագրողն այդ արժեքի վերաբերյալ դիտավորյալ դրվել է մոլորության մեջ:

17.9 Եթե գույքը ապահովագրված է ոչ լրիվ արժեքով կամ եթե Պայմանագրի գործողության ընթացքում տեղի է ունեցել գույքի արժեքի աճ, Ապահովադրին իրավունք ունի լրացուցիչ ապահովագրավճար մուծելու միջոցով մեծացնել ապահովագրական գումարը: Տվյալ դեպքում Պայմանագրի կողմերի միջև կնքվում է լրացուցիչ համաձայնագիր:

17.10 Եթե Պայմանագրի գործողության ընթացքում ապահովագրված գույքի իրական արժեքը նվազում է, ապա Ապահովադրին իրավունք ունի համապատասխան չափով նվազեցնել ապահովագրական գումարը և ապահովագրավճարը՝ մասհանելով Ապահովագրողի կրած ծախսերը, այն օրվանից, երբ Ապահովադրի տեղեկացրել է Ապահովագրողին ապահովագրական գումարը նվազեցնելու անհրաժեշտության մասին:

17.11 Եթե Ապահովադրին վճարվել է ապահովագրական հատուցում, ապա համապատասխան ապահովագրական գումարը նվազում է վճարված ապահովագրական հատուցման չափով: Ապահովագրական գումարը համարվում է նվազեցված ապահովագրական պատահարի տեղի ունենալու օրվանից սկսված:

17.12 Վնասված գույքի վերականգնումից հետո Ապահովադրին իրավունք ունի լրացուցիչ ապահովագրավճարի դիմաց վերականգնել նախնական ապահովագրական գումարը:

17.13 Պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում վճարված հատուցումների ընդհանուր գումարը չի կարող գերազանցել Պայմանագրում նշված ապահովագրական գումարի չափը:

17.14 Կանխիկ փողերը, արժեթղթերը, փաստաթղթերը, խնայողական գրքույկները, ինչպես նաև Կանոնների 14.2. կետի գ) ենթակետում և 14.3-14.4. կետերում նշված ծախսերը համարվում են ապահովագրված «առաջին ռիսկի համար» Կանոնների 27.2 կետին համապատասխան:

17.15 Ի լրումն ապահովագրական գումարների՝ Պայմանագրում կարող են սահմանվել Պայմանագրի գործողության ընթացքում ապահովագրական հատուցման առավելագույն գումարներ (հատուցման չափաքանակներ) ապահովագրված գույքի, ապահովագրական ռիսկերի առանձին խմբերի, ապահովագրված ծախսերի, մեկ ապահովագրական պատահարի կամ Պայմանագրի գործողության ընթացքում տեղի ունեցած բոլոր ապահովագրական պատահարների հանրագումարի համար:

ԲԱԺԻՆ 18. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ, ԴՐԱ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ ԶՎՃԱՐԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

18.1 Ապահովագրավճարն ապահովագրության համար նախատեսված գումար է, որն Ապահովադրի Պայմանագրի համաձայն պարտավոր է մուծել Ապահովագրողին:



ԳՈՒՅՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

18.2 Ապահովագրավճարը հաշվարկվում է ելնելով ապահովագրական սակագնից (ապահովագրական գումարի նկատմամբ ապահովագրավճարի դրույքաչափ), որը սահմանվում է ելնելով գույքի տեսակից, բնութագրերից և այլ գործոններից, որոնք կարող են ազդել ապահովագրական պատահարի առաջացման և վնասի չափի մեծության վրա:

18.3 Պայմանագրով սահմանված կարգով՝ Ապահովադիրը՝ ապահովագրավճարը կարող է մուծել միանվագ կամ մաս-մաս, ինչպես կանխիկ տեսքով, այնպես էլ անկանխիկ հաշվարկներով, ինչը սահմանվում է Պայմանագրով:

18.4 Եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապա Ապահովադիրը կողմից ապահովագրավճարի վճարման օր է համարվում՝
ա) կանխիկ վճարման դեպքում՝ Ապահովագրողի կամ նրա լիազորված անձի կողմից գումարի ստացման օրը,
բ) անկանխիկ վճարումների դեպքում՝ Ապահովագրողի հաշվարկային հաշվին գումարի ստացման օրը:

18.5 Եթե ապահովագրական պատահարը տեղի է ունեցել մինչև հերթական ապահովագրավճարի վճարումը, որը կետանցվել է, ապա ապահովագրողն իրավունք ունի վճարման ենթակա ապահովագրական հատուցման չափը որոշելիս հաշվանցելու կետանցված ապահովագրավճարի չափը:

18.6 Եթե Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 14-օրյա ժամկետում Ապահովադիրը չի վճարում միանվագ կամ առաջին հերթական ապահովագրավճարը, ապա ապահովագրողն իրավունք ունի միակողմանի լուծելու Պայմանագիրը, եթե Պայմանագրով նախատեսված չէ այլ ժամկետ կամ ապահովագրավճարի մուծման տարածամեկտեման հնարավորություն:

18.7 Եթե Ապահովադիրը Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետում չի վճարել հերթական ապահովագրավճարը, ապա ապահովագրողն իրավունք ունի ապահովագրավճարի վճարման համար սահմանված ժամկետից երեք օր (յրագուցիչ ժամկետ) հետո միակողմանի լուծելու Պայմանագիրը՝ առանց այդ մասին ապահովադիրին ծանուցելու:

ԲԱԺԻՆ 19. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ

19.1 Գույքը համարվում է ապահովագրված միայն ապահովագրության տարածքում գտնվելու ժամանակահատվածում: Ապահովագրության տարածք է համարվում Պայմանագրում նշված տարածքը: Ընդ որում ապահովագրված գույքի տարբեր խմբերի և տարբեր ռիսկերի նկատմամբ կարող են սահմանվել առանձին ապահովագրության տարածքներ:

19.2 Ապահովագրության տարածք է համարվում Պայմանագրում նշված՝
ա) շենքի, շինության կամ բաց ցանկապատված տարածությունում գտնվող ապրանքների համար՝ հողակտորի տարածքը, որի վրա տեղակայված է Ապահովադիր գույքային համալիրը.

բ) շինարարական և գյուղատնտեսական սարքավորումների համար՝ շինարարության տարածքը կամ մեկ բնակավայրի շրջանակներում շահագործման այլ տարածք.

գ) Կանոնների 7.2 կետի գ) ենթակետի համաձայն փոխադրվող գույքի համար՝ տրանսպորտային միջոցի երթուղին.

դ) այլ շարժական գույքի համար՝ շենքի կամ տարածքի տարածությունը:

19.3 Գույքը, որը տեղափոխվում է ապահովագրության տարածքից ապահովագրական պատահարի տեղի ունենալու ուժով կամ ապահովագրական պատահարի անխուսափելի տեղի ունենալուց առաջ նույնպես ծածկվում է ապահովագրությամբ՝ այդպիսի փոխադրման ժամանակ կործանման, վնասման կամ կորստի դեպքերում:

19.4 Կողմերի հատուկ համաձայնությամբ Պայմանագրով կարող է նախատեսվել գույքի առանձին խմբերի ապահովագրություն (մասնավորապես տեղափոխվող գույքի կամ շարժական սարքավորումների) այն շենքի (շինության) կամ հողակտորի տարածքից դուրս, որի վրա տեղակայված է Ապահովադիրի հիմնական գույքը: Այդ դեպքում, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապա ապահովագրության տարածք է համարվում Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքը:

19.5 **Կանոնների 19.4 կետով սահմանված ապահովագրությունը չի տարածվում** կողոպուտ և ավազակություն ռիսկերի (Կանոնների 7.1 կետի բ) ենթակետ), արտաքին ազդեցության այլ ռիսկերի (Կանոնների 11-րդ բաժին), ինչպես նաև ավտոտրանսպորտային միջոցներից և այլ պահեստարաններից ցանկացած տիպի գույքի հափշտակման ռիսկերի վրա:

ԲԱԺԻՆ 20. ՌԻՍԿԻ ԱՍՏԻՃԱՆԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

20.1 Պայմանագրի գործողության ժամանակահատվածում Ապահովադիրը **ՊԱՐՏԱՎՈՐ Է ԱՆՀԱՊԱՎ** տեղյակ պահել Ապահովագրողին Պայմանագրի կնքման պահին իր կողմից հայտնած հանգամանքների իրեն հայտնի էական փոփոխությունների և այլ հանգամանքների մասին, որոնք էապես կարող են ազդել ապահովագրական ռիսկի մեծացման վրա:

20.2 Բոլոր դեպքերում էական են համարվում՝
ա) ապահովագրության տարածքում իրականացվող տնտեսական գործունեության փոփոխությունը,
բ) ապահովագրված գույքի փոխանցումը վարձակալության կամ լիզինգի,

գ) ապահովագրության տարածքում կամ շենքում (շինությունում), որտեղ գտնվում է ապահովագրված գույքը, շինարարական և մոնտաժային աշխատանքների (տեղահանում, վերակառուցում, կապիտալ վերանորոգում կամ շենքի և շինության, սարքավորման նորացում) իրականացումը,

դ) պահեստավորված ապրանքների տեսականու փոփոխությունը,

ե) ապահովագրված գույքի հսկողության և պահպանման պայմանների, ինչպես նաև անվտանգության և պաշտպանության այլ միջոցների փոփոխությունը:

20.3 Այն դեպքում, երբ Ապահովադիրը Կանոնների սույն բաժնով ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԵՎ ԺԱՄԿԵՏՈՒՄ ՉԻ ՀԱՅՏՆԵԼ ապահովագրական ռիսկի աստիճանի էական ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ (ՄԵԾԱՑՄԱՆ) ՄԱՍԻՆ, Ապահովագրողն ԻՐԱՎՈՒՆԹՅՈՒՆ ՈՒՆԻ վաղաժամկետ լուծելու Պայմանագիրը համաձայն օրենքի, այլ իրավական ակտերի և Կանոնների, ինչպես նաև պահանջելու Պայմանագրի վաղաժամկետ դադարեցման հետ կապված վնասների հատուցում՝ օրենքին և այլ իրավական ակտերին համապատասխան:

20.4 Ապահովագրողն ապահովագրական ռիսկի աստիճանի փոփոխության մասին տեղեկանալուց հետո կարող է պահանջել փոփոխել ապահովագրության պայմանները կամ սահմանել լրացուցիչ ապահովագրավճար: Եթե Ապահովադիրը իրաժարվում է ապահովագրության պայմանների փոփոխումից կամ լրացուցիչ ապահովագրավճարի վճարումից, ապա Ապահովագրողն իրավունք ունի վաղաժամկետ լուծելու Պայմանագիրը համաձայն օրենքի, այլ իրավական ակտերի և Կանոնների:

20.5 Ապահովագրողը չի կարող վաղաժամկետ լուծել Պայմանագիրը, եթե ռիսկի աստիճանի մեծանալու վտանգը վերացած է:

20.6 Կոտրանքով կողոպուտ, կողոպուտ կամ ավազակություն դեպքի ապահովագրության դեպքում, համաձայն Կանոնների 7-րդ բաժնի, ռիսկի աստիճանի մեծացումը տեղի է ունենում հատկապես այն դեպքում, երբ ապահովագրության տարածքում գտնվող տարածքի կամ պահեստարանների կամ լրացուցիչ անվտանգության բնութագրերով օժտված տարածքի բանալին կորցնելուց հետո կողպեքներն անմիջապես չեն փոխարինվել այդպիսի հուսալիություն ունեցող այլ կողպեքով:

ԲԱԺԻՆ 21. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՄԵՐԸ

21.1 Ապահովադիրը պարտավոր է՝

21.1.1 ՊԱՀՊԱՆԵԼ օրենքով, այլ իրավական ակտերով կամ Կանոններով նախատեսված ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲՈՂՈՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ, ինչպես նաև այն ԿԱՆՈՆՆԵՐԸ, որոնք գրված են Պայմանագրում: Թույլատրվում են անվտանգության կանոններից շեղումներ, եթե վերջիններս հաստատվել են պետական հսկողություն իրականացնող մարմիններից:



ԳՈՒՅՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

21.1.2 ՊԱՀՊԱՆԵԼ ապահովագրված գույքը սարքին վիճակում, հատկապես ջրամատակարարման, ջեռուցման, կոյուղու համակարգերի հետ միացված սարքավորումները և մեքենաները, տանիքները և շենքի արտաքին կողմից տեղադրված սարքավորումները: ԱՆՄԻՋԱՊԵՍ ՎԵՐԱՆՈՐՈՒԳԵԼ դրանք վնասվելու դեպքում:

21.1.3 արտադրողի սահմանած կանոններին և ցուցումներին համապատասխան ԱՊԱՀՈՎԵԼ տվյալների պահպանման միջոցառումներ:

21.1.4 այլ տարերային աղետներից ապահովագրության դեպքում (Կանոնների 4-րդ բաժին)`

ա) ԱՋԱՏ ՊԱՀԵԼ ջրատար խողովակները,

բ) հողի մակերևույթից ներքև պահպանվող ԳՈՒՅՔԸ ՊԱՀԵՍԱՎՈՐԵԼ ոչ պակաս, քան գետնից 12 սմ, կամ Ապահովագրողի հետ համաձայնեցված այլ բարձրության վրա:

21.1.5 ջրամատակարարման, ջեռուցման, կոյուղու և նման համակարգերից (Կանոնների 5-րդ բաժին), ցայտաջրմուղային համակարգի և ջրաքաշ խողովակի ջրի պատճառած վնասներից (Կանոնների 6-րդ բաժին) ապահովագրության դեպքում`

ա) մշտապես ԻՐԱԿԱՆԱՅՆԵԼ ՇՐՋԱՅՅԵՐ չօգտագործվող կամ փակ տարածություններ և անհրաժեշտության դեպքում ազատել ջրից (դատարկել ջուրը խողովակներից և տարաներից) այդ տարածություններում գտնվող բոլոր ջրատար կառույցները և սարքավորումները,

բ) տարվա ցուրտ եղանակներին անհրաժեշտ չափով ՋԵՌՈՒՅԵԼ և կանոնավոր կերպով ԻՐԱԿԱՆԱՅՆԵԼ բոլոր տարածությունների ՇՐՋԱՅՅ, անհրաժեշտության դեպքում ազատել ջրից (դատարկել ջուրը խողովակներից և տարաներից) այդ տարածություններում գտնվող բոլոր ջրատար կառույցները և սարքավորումները,

գ) հողի մակերևույթից ներքև պահպանվող ԳՈՒՅՔԸ ՊԱՀԵՍԱՎՈՐԵԼ ոչ պակաս քան գետնից 12 սմ, կամ Ապահովագրողի հետ համաձայնեցված այլ բարձրության վրա:

21.1.6 ոչ աշխատանքային ժամերին կոտրելու միջոցով կողոպուտից ապահովագրության դեպքում (Կանոնների 7.1. կետի ա) ենթակետ) անհրաժեշտ ձևով ՓԱԿԵԼ մուտքի դռները, այլ անցքերը և որմնախորշերը: Եթե Ապահովագրողն պատկանում է ապահովագրված տարածության կամ պահեստարանների միայն մի մասը, ապա սույն ենթակետով սահմանված դրույթը տարածվում է միայն այդպիսի տարածությունների (պահեստարանների) վրա:

21.2 Ապահովագրողի կողմից հայտարարված պաշտպանության և հրդեհային պաշտպանության միջոցների նկատմամբ պետք է իրականացվեն հետևյալ պահանջները`

ա) հրդեհի մարման միջոցներ (կրակմարիչներ, ցայտաջրմուղներ, ջրաքաշեր), որոնք պետք է տեղադրվեն, ստուգվեն և գտնվեն աշխատանքային վիճակում,

բ) Ապահովագրության տարածքի շուրջօրյա պաշտպանություն, որը պետք է իրականացվի շաբաթը 7 օր, օրը 24 ժամ,

գ) Պահպանության և հրդեհային ազդանշանային համակարգի առկայություն: Այդ համակարգերը պետք է փորձարկվեն, պահպանվեն աշխատանքային վիճակում, ժամանակին միանան կամ մշտապես միացած լինեն, կախված դրանց օգտագործման ռեժիմից: Պահպանության և հրդեհային ազդանշանների վահանակները պետք է մշտապես հսկվեն:

21.3 Ապահովագրողի կողմից Կանոնների 21.1. և 21.2. կետերի ՊԱՀԱՆՋՆԵԶՈՒ ՉԻՐԱԿԱՆԱՅՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ, տեղի ունեցած իրադարձությունը, որը կարող է հիմք հանդիսանալ Ապահովագրողին ապահովագրական հատուցում վճարելու նպատակով պահանջ ներկայացնելու համար, ՉԻ ՀԱՄԱՐՎՈՒՄ ապահովագրական պատահար և Ապահովագրողի վնասները Ապահովագրողի կողմից ԵՆԹԱԿԱ ՉԵՆ ՀԱՏՈՒՅՄԱՆ:

21.4 Ապրանքային պաշարների ապահովագրության դեպքում Ապահովագրողը ՊԱՐՏԱՎՈՐ Է իրականացնել պահեստում (առևտրային սրահում) եղած ապրանքների հաշվառում: Ապահովագրական պատահարի վրա հասնելու դեպքում Ապահովագրողին պետք է ներկայացվեն ապրանքների առկայության և շարժի մասին հաշվառման համապատասխան տվյալները: Այդ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՉՆԵՐԿԱՅՄԱՅՆԵԼԸ Ապահովագրողին իրավունք է տալիս ՄԵՐԺԵԼ ապահովագրական պատահարի հետևանքով պատճառված վնասի ապահովագրական ՀԱՏՈՒՅՄՈՒՄԸ:

ԲԱԺԻՆ 22. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ ՏԵՂԻ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

22.1 Ապահովագրական պատահարի կամ ցանկացած պատահարի, որը կարող է հետագայում հանգեցնել ապահովագրական պատահարի, տեղի ունենալու դեպքում Ապահովագրողը ՊԱՐՏԱՎՈՐ Է տեղի ունեցած պատահարի մասին ԱՆՀԱՊԱՂ, ցանկացած մատչելի և տեղեկացման փաստը հավաստող եղանակով տեղեկացնել Ապահովագրողին (նրա ներկայացուցչին) Պայմանագրում նշված հեռախոսահամարներով, իսկ բոլոր դեպքերում պատահարը տեղի ունենալուց հետո ՈՉ ՈՒՇ, ՔԱՆ 72 ԺԱՄՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ այդ մասին գրավոր հայտնել Ապահովագրողին:

22.2 Եթե Ապահովագրողին Ապահովագրողին ՉԻ ՀԱՅՏՆԵԼ ապահովագրական պատահարի մասին Կանոնների 22.1 կետում և կամ Պայմանագրում նշված կարգով և (կամ) ժամկետներում, ապա Ապահովագրողը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1017 հոդվածի 2-րդ մասի համաձայն ԻՐԱՎՈՒՆԵԸ ՈՒՆԻ ՉՎՃԱՐԵԼՈՒ ապահովագրական հատուցումը, եթե չապացուցվի, որ Ապահովագրողը ժամանակին իմացել է ապահովագրական պատահարի վրա հասնելու մասին կամ, որ այդ մասին Ապահովագրողի մոտ տեղեկությունների բացակայությունը չէր կարող ազդել ապահովագրական հատուցում վճարելու նրա պարտականության վրա:

22.3 Այն բանից հետո, երբ Ապահովագրողին հայտնի է դառնում որևէ իրադարձության տեղի ունենալու մասին, որը կարող է Ապահովագրողին դիմելու համար հիմք հանդիսանալ, Ապահովագրողը (նրա ներկայացուցիչը կամ Շահառուն) ՊԱՐՏԱՎՈՐ Է`

ա) անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել վնասի կանխման կամ նվազեցման ուղղությամբ.

բ) պատահարի մասին անմիջապես հայտնել համապատասխան լիազորված մարմնին (ՀՀ ոստիկանություն, հրշեջ ծառայություն և այլն) մասնավորապես, գողության, կոտորանքի, թալանի կամ երրորդ անձանց կողմից գույքի կանխատեսված (միտումնավոր) ոչնչացման կամ վնաս հասցնելու դեպքում` այդ մասին անմիջապես հայտնել ոստիկանության մարմիններին, հրդեհի դեպքում` հրշեջ ծառայության մարմիններին, պալքուսնի կամ վթարի դեպքում` վթարային ծառայության համապատասխան մարմիններին և ստանալ գրավոր տեղեկանք.

գ) մինչև Ապահովագրողի ներկայացուցիչների, ոստիկանության աշխատակիցների կամ այլ կոմպետենտ մարմինների պատճառված վնասի վայր ժամանելը` հավաքել մատչելի նախնական տեղեկատվություն վնասի առաջացման պատճառների և հանգամանքների վերաբերյալ (օրինակ` կազմել կամայական ձևով ակտ ` տեղական, այլ պաշտոնական մարմինների, ինչպես նաև կատարված դեպքի ակնմատեսների (վկաների) մասնակցությամբ), հնարավորինս ամրագրել վնասի պատկերը լուսանկարահանման, տեսաձայնակարահանման կամ կինոնկարահանման միջոցով և փոխանցել այն Ապահովագրողին` վնասի չափը և պատճառը հետազոտում ավելի ճշգրիտ որոշելու նպատակով.

դ) պահպանել վնասված գույքը անփոփոխ վիճակում և ներկայացնել այն Ապահովագրողի ներկայացուցչին` զննելու և (կամ) սահմանված ձևով ակտ կազմելու համար, բացառությամբ` երբ վնասի պատկերի փոփոխումը թելադրվում է անվտանգության կանոններով (նվազեցնելով վնասի չափերը) կամ եթե դրա համար ձեռք է բերվել Ապահովագրողի համաձայնությունը, ինչպես նաև Ապահովագրողին հայտնելուց 7 օրը լրանալուց հետո.

ե) Ապահովագրողին հնարավորություն տալ անցկացնել վնասված ապահովագրված գույքի զննում կամ դիտարկում, վնասի պատճառների և չափերի քննում.



**ԳՈՒՅՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ
ԿԱՆՈՆՆԵՐ**

զ) Ապահովագրական հատուցման պահանջի համար Ապահովագրողի կողմից սահմանված ձևով վերջինիս ներկայացնել գրավոր դիմում՝ նշելով դիմում տալու պահին պատահարի առաջացման Ապահովագրին հայտնի պատճառները, վնասի նկարագրությունը և դրա ենթադրվող չափը, ինչպես նաև տրամադրել Ապահովագրողի կողմից պահանջվող այլ տեղեկություններ և փաստաթղթեր:

է) կատարել օրենքով, այլ իրավական ակտերով, Կանոններով և Պայմանագրով իրեն վերապահված այլ պարտականություններ:

22.4 Վնասների առաջացումը հաստատելու և Ապահովագրողին Ապահովագրի կողմից հայտարարած վնասները ապահովագրական պատահար համարելու համար, **Ապահովագրող պետք է Ապահովագրողին ներկայացնի հետևյալ փաստաթղթերը՝**

22.4.1 *հրդեհի հետևանքով վնասների առաջացման դեպքում, որն առաջացել է ապահովագրված ռիսկերից ցանկացածի հետևանքով* հրդեհի փաստով քրեական գործ հարուցելու կամ քրեական գործի հարուցումը մերժելու մասին տեղեկանք,

22.4.2 *տարերային աղետների, ինչպես նաև կայծակնահարության հետևանքով վնասների առաջացման դեպքում* տեղեկանք օդերևութաբանական ծառայությունից բնական իրադարձությունների նկարագրությամբ դեպքի տեղի ունենալու վայրի և այդ իրադարձության տեղի ունենալու ամսաթվի վերաբերյալ (փոթորիկի դեպքում տեղեկանքը պետք է պարունակի տվյալներ քամու միջին արագության մասին):

22.4.3 *ջրամատակարարման, ջեռուցման, կոյուղու և մնան համակարգերից, ցայտաջրմուղային և ջրաքաշ համակարգերից ջրի հասցրած վնասների դեպքում՝*

ա) ջրամատակարարման և այլ նմանատիպ ցանցեր շահագործող մասնագիտացված ծառայությունների կողմից տրված ակտ, որը բնութագրում է տվյալ համակարգերի շարքից դուրս գալու պատճառները և մեղավոր կողմին,

բ) տեղեկանք բնակչահագործման կառավարչության (կամ այլ նման կազմակերպության) կողմից այն դեպքում, եթե շենքը բնակելի է,

22.4.4 *պայթյունի հետևանքով վնասների դեպքում՝*

ա) Լեռայնատեխնոլոգությունից կամ ուժային ազդեգատների (զագատար ցանցերի) պայմանների նկատմամբ դիտարկում իրականացնող այլ պետական ծառայություններից տեղեկանքներ կամ ակտեր վնասի պատճառների մասին՝ նշելով տեխնիկական թերությունները, շահագործման նորմաների խախտման մեջ մեղավոր անձանց,

բ) տեղեկանք բնակչահագործման կառավարչության (կամ այլ նման կազմակերպության) կողմից այն դեպքում, եթե շենքը բնակելի է,

22.4.5 *կտրելու միջոցով կողոպուտի, գողության, ավազակության ժամանակ կամ երրորդ անձանց կանխամտածված գործողությունների ժամանակ՝*

ա) տեղի ունեցածի մասին ներքին գործերի մարմիններ ներկայացված Ապահովագրի դիմումի պատճենը՝ պահանջով անցկացնել հետաքննություն կամ հարուցել քրեական գործ,

բ) քրեական գործի հարուցման (կամ դրա հարուցումը մերժելու) մասին որոշման պատճենը,

գ) ապահովագրված շինությունների և այլ գույքի կողմնակի կազմակերպության ուժերով պահպանություն իրականացնելու դեպքում՝ պահպանություն իրականացնող ընկերության կամ արտագերատեսչական պահպանություն իրականացնողների հետ կնքված պայմանագրի պատճենը,

դ) պահպանության ազդանշանային համակարգի առկայության դեպքում՝ ազդանշանային համակարգի աշխատելու վերաբերյալ փաստաթղթերը, վտանգի ազդանշանը պահպանող ձեռնարկության վահանակի վրա ստացման կամ արտագերատեսչական պահպանության և օպերատիվ խմբի մեկնումը հաստատող փաստաթղթերը,

ե) պահպանությանն ուղղված գործողությունների վերաբերյալ պահպանությունն իրականացնող ձեռնարկության ծառայողական փաստաթղթերի պատճենը,

22.4.6 *տրանսպորտային միջոցի վրաերթից առաջացած վնասների դեպքում՝*

ա) համապատասխան եզրակացություն կամ որոշում ճանապարհային ոստիկանությունից կամ դեպքի քննությունն իրականացնող համապատասխան մարմնից,

բ) Ապահովագրի մոտ առկա այն կազմակերպության կամ ֆիզիկական անձի տվյալներ պարունակող փաստաթղթերի պատճենը, որոնց տրանսպորտային միջոցը մասնակից է պատահարին:

22.5 Բոլոր դեպքերում **Ապահովագրող ՊԱՐՏՎՈՐ Է** ներկայացնել ներքին ծառայողական փաստաթղթերի պատճենը, (այսինքն՝ ցանկացած ակտ, արձանագրություն, բացատրագիր, ծառայողական գրություն, զեկուցագիր և նման փաստաթուղթ), որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն կապված են քննարկվող վնասերի հետ:

22.6 Բոլոր այն դեպքերում, երբ վնասը առաջացնող հանգամանքների քննարկմանը մասնակցում են ներքին գործերի, դատախազության կամ իրավապահ այլ մարմիններ, **Ապահովագրող ՊԱՐՏՎՈՐ Է** ներկայացնել քրեական գործի հարուցման կամ հարուցումը մերժելու վերաբերյալ որոշման պատճենը:

22.7 **Ապահովագրող ՊԱՐՏՎՈՐ Է** ներկայացնել կրած վնասների գումարների չափը հաստատող և հիմնավորող փաստաթղթեր, որոնց հիման վրա կկատարվի ապահովագրական հատուցման գումարի հաշվարկը՝ կախված ապահովագրական պատահարի բնույթից: Այդպիսի փաստաթղթերի թվին են պատկանում նաև՝

ա) վնասված, ոչնչացված կամ կորած գույքի ցուցակը,

բ) ապահովագրական պատահարի վրա հասնելու պահին վնասված, ոչնչացված կամ կորած գույքի արժեքը հաստատող փաստաթղթերը,

գ) գույքի գույքագրման ակտերը, որոնք կազմված են գույքի վնասման (ոչնչացման) փաստի վերաբերյալ՝ ապահովագրական պատահարը վրա հասնելու ամսաթվին մոտ ամսաթվով,

դ) ապրանքային պահուստների (մուտքի և բեռնաթափման) հաշվառման վերաբերյալ, պատրաստի արտադրանքի (հումքի, նյութերի, իրացման ենթակա ապրանքների կամ կիսաֆաբրիկատների) վերաբերյալ փաստաթղթերը,

ե) վերանորոգման (վերականգնողական) աշխատանքների կատարման հաշվեկշիռը,

զ) այլ փաստաթղթեր, որոնց հիման վրա կարելի է գաղափար կազմել Ապահովագրի կրած վնասների մեծության վերաբերյալ:

22.8 **Ապահովագրող (Շահառու) ՊԱՐՏՎՈՐ Է Կանոններով սահմանված փաստաթղթերը ներկայացնել պատահարի վերաբերյալ Ապահովագրողին գրավոր դիմում ներկայացնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:**

22.9 *Այդ ժամկետում Ապահովագրի (Շահառուի) կողմից Կանոններով սահմանված փաստաթղթերը չներկայացնելու կամ գրավոր որևէ միջնորդություն սահմանված երկու ամսյա ժամկետը երկարաձգելու մասին չներկայացնելու դեպքում, Ապահովագրողը Կանոնների համաձայն Ապահովագրի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով մերժում է ապահովագրական հատուցման վճարումը*, սույն կետում սահմանված ժամկետը լրանալուց հետո հնգօրյա ժամկետում:

22.10 Այն դեպքում, երբ Ապահովագրողը գրավոր միջնորդություն է ներկայացնում փաստաթղթերի ներկայացման խոչընդոտների կամ այլ պատճառաբանությամբ սահմանված ժամկետը երկարացնելու մասին, ապա Ապահովագրողը ելնելով տվյալ գործի հանգամանքներից կարող է այդ ժամկետը երկարաձգել մինչև վեց ամիս ժամկետով: Նշված ժամկետում Ապահովագրի կողմից սահմանված պարտավորության չկատարման հետևանքները նույնանում են սույն կետի երկրորդ պարբերությունում սահմանված դրույթների հետ:

22.11 **Ապահովագրողը պարտավոր է՝**

22.11.1 Կանոններով նշված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուց հետո հինգ օրվա ընթացքում օրենքի և այլ իրավական ակտերի համաձայն ընդունել ապահովագրական հատուցումը վճարելու կամ մերժելու (մերժման դեպքում նշելով դրա



ԳՈՒՅՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

պատճառները) մասին եզրակացություն (որոշում): Ապահովագրողն ապահովագրական հատուցումը վճարելու մասին որոշումը պատշաճ կերպով՝ Ապահովագրին (Շահառուին) անձամբ հանձնելու միջոցով կամ Ապահովագրի (Շահառուի) հասցեով փոստային առաքմամբ, տրամադրում է Ապահովագրին (Շահառուին): Ապահովագրական հատուցման նվազեցման կամ հատուցման մերժման դեպքում Ապահովագրողի կայացրած պատճառաբանված որոշումը հնգօրյա ժամկետում պատվիրված նամակով առաքվում է Ապահովագրին (Շահառուին)՝ նրա մշտական բնակության հասցեով.

22.11.2 Հատուցում իրականացնելու մասին որոշում կայացնելու օրվանից 30 օրվա ընթացքում միանվագ իրականացնել ապահովագրական հատուցումը, եթե Ապահովագրողը և Ապահովագրական հատուցման վճարման այլ կարգ կամ ժամկետ չեն համաձայնեցրել.

22.12 Ապահովագրողն իրավասու է հետաձգել ապահովագրական հատուցման վճարումը այն դեպքում, եթե՝

ա) կան հիմնավորված կասկածներ Ապահովագրի ապահովագրական հատուցումը ստանալու իրավասության վերաբերյալ: Այդ դեպքում ապահովագրական հատուցումը չի վճարվում այնքան ժամանակ, մինչև կներկայացվեն անհրաժեշտ ապացույցներ (այդպիսի ապացույցներ են հանդիսանում Կանոնների 22.4-22.7 կետերում նշված փաստաթղթերը,

բ) Ապահովագրական պատահարի փաստի վերաբերյալ ներքին գործերի մարմինների կողմից քրեական գործ է հարուցված Ապահովագրի ղեկավար աշխատակիցների (հենց Ապահովագրի (կամ նրա հարազատների, եթե Ապահովագրողը հանդիսանում է ֆիզիկական անձ) նկատմամբ՝ մինչև քրեական հետաքննության ավարտը:

ԲԱԺԻՆ 23. ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

23.1 Ապահովագրական հատուցման չափը չի կարող գերազանցել ապահովագրական պատահարի արդյունքում Ապահովագրի կրած վնասների չափը: Ապահովագրական հատուցման չափը չի կարող գերազանցել նաև ապահովագրության պայմանագրով սահմանված ապահովագրական գումարի չափը: Ապահովագրված գույքի առանձին միավորները, որոնց համար Պայմանագրով սահմանված է ապահովագրական գումար կամ ապահովագրական գումարի ենթաչափ, ապահովագրական հատուցումը սահմանափակվում է տվյալ ապահովագրական գումարի կամ ապահովագրական գումարի ենթաչափի մեծությամբ:

23.2 Ապահովագրված գույքի մասնակի վնասման դեպքում ենթակա են հատուցման այն ծախսերը, որոնք անհրաժեշտ են գույքի ապահովագրական պատահարից անմիջապես առաջ եղած վիճակը վերականգնելու համար (վերականգնողական ծախսեր):

23.2.1. Կանոնների շրջանակում *վերականգնողական ծախսեր* ասելով հասկացվում են՝

ա) վերանորոգման համար անհրաժեշտ պահեստամասերի և նյութերի գնման ծախսերը,

բ) վերանորոգման վայր պահեստամասերի և նյութերի տեղափոխման ծախսերը,

գ) վերանորոգման աշխատանքների վճարման ծախսերը:

Ընդ որում, վերականգնողական ծախսերը պետք է նվազեցվեն ապահովագրական պատահարը տեղի ունենալու պահին վնասված գույքի մշակվածության չափով:

23.2.2. Վնասված գույքի վերականգնման կամ վերանորոգման ծախսերի (վերականգնողական ծախսեր) հաշվման ժամանակ կիրառվում են հետևյալ կանոնները՝

ա) վնասված գույքի վերականգնման (վերանորոգման) համար պետք է կիրառվեն ըստ տեսակի և որակի նույնատեսակ նյութեր և պահեստամասեր, ինչպիսիք օգտագործվել են վնասված գույքում, կամ այլ նյութեր և պահեստամասեր, որոնք դրանց հետ նույնատեսակ են արժեքով,

բ) շենքի և շինության վերանորոգման իրականացման համար օգտագործված նյութերի ծախսերը հատուցվում են վնասված շենքի (շինության) կոնստրուկտիվ տարրերի ապամոնտաժման արդյունքում մնացած, հետագա օգտագործման համար պիտանի նյութերի (պիտանի մնացորդներ) արժեքների պակասեցմամբ,

գ) վերանորոգման աշխատանքների վճարման ծախսերը հատուցվում են ապահովագրական պատահարի տեղի ունենալու պահին վերանորոգման աշխատանքների իրականացման վայրում նմանատիպ աշխատանքների միջին սակագներով, իսկ Ապահովագրի ուժերով վերանորոգման իրականացման դեպքում՝ վերանորոգման ինքնարժեքով կամ ապահովագրական պատահարի տեղի ունենալու պահին վերանորոգման աշխատանքների իրականացման վայրում նմանատիպ աշխատանքների միջին սակագներով, կախված այն բանից, թե այդ գումարներից որը կլինի ավելի փոքր,

դ) հաշվարկներում ներառվում են միայն այն աշխատանքների իրականացման ծախսերը, որոնք անհրաժեշտ են ապահովագրական պատահարի հետևանքների վերացման համար: Չեն հատուցվում լրացուցիչ այն ծախսերը, որոնք կապված են աշխատանքների կատարման հրատապության, ապահովագրված գույքի կատարելագործման կամ նախագծի (կառուցվածքի) փոփոխության, պլանային վերանորոգման իրականացման հետ:

ե) վնասված գույքի նախնական վերանորոգման ծախսերը հատուցվում են միայն այն դեպքում, երբ նախնական վերանորոգումը հանդիսանում է վերջնական վերանորոգման մի մասը և եթե նախնական վերանորոգմամբ չեն մեծանալ վերանորոգման ընդհանուր ծախսերը, քան եթե նախնական վերանորոգում չկատարվեր,

զ) եթե շենքի կամ շինության ապահովագրական պատահարի հետևանքով վնասված կառուցվածքային տարրերը պետք է քանդվեն, ապա չվնասված կառուցվածքային տարրերը (օրինակ՝ ծածկեր, կտորներ և այլն) նորից հավաքվեն, այդ աշխատանքների կատարման ծախսերի գումարը ներառվում է վերանորոգման ծախսերի մեջ,

է) եթե շենքի կամ շինության առանձին կառուցվածքային մասերի համար անհրաժեշտ է անցկացնել դրանց ժամանակավոր ամրացում (հենարանի սարքավորումներ, ձգանակ և այլն), այդ աշխատանքների կատարման ծախսերի և դրանց իրականացման համար անհրաժեշտ նյութերի ծախսերի գումարը ներառվում է վերանորոգման ծախսերի մեջ,

ը) լրացուցիչ ծախսերը, կապված լրացուցիչ աշխատանքների վճարման հետ, նյութերի, պահեստամասերի կամ մեքենաների էքսպրես-առաքումով կամ օդային տրանսպորտով փոխադրումը չի հատուցվում:

23.3 Ապահովագրված գույքի լրիվ կործանման դեպքում ապահովագրական հատուցումը հաշվարկվում է ապահովագրական պատահարը վրա հասնելու պահին գույքի իրական արժեքի չափով, հանելով այն մնացորդների արժեքը, որոնք կարող են վաճառվել կամ օգտագործվել գործնական նպատակներով (անհրաժեշտ մնացորդներով): Ապահովագրի իրավասու չէ հրաժարվել այդպիսի մնացորդներից:

23.4 Կանոններում **լրիվ կործանում** ասելով հասկացվում է ապահովագրված գույքի կորուստը, վնասումը կամ ոչնչացումը, դրա վերականգնման տեխնիկական անհնարինության կամ դրա այնպիսի վիճակը, երբ վերականգնման համար անհրաժեշտ ծախսերը գերազանցում են ապահովագրական պատահարը վրա հասնելու պահին գործող դրա իրական գինը:

23.5 Փրկված գույքի (օգտագործման ենթակա ապրանքների) արժեքը որոշվում է տվյալ տարածքում այդ մնացորդների վաճառքի գնի հիման վրա:

23.6 Մշակվածության աստիճանը հաշվարկվում է փորձագիտական գնահատականի հիման վրա: Եթե ապահովագրական գումարը սահմանվել է հաշվեկշռային արժեքին համապատասխան, ապա գույքային միավորի մշակվածության մակարդակը համարվում է հավասար հաշվապահական հաշվառման տվյալներով կուտակված մշակվածության մակարդակին:

23.7 Եթե ապահովագրական գումարը հաստատված է արտարժույթով արտահայտված գումարի դրամային համարժեքով, ապա ապահովագրական հատուցման վճարման չափը հաշվարկվում է՝ ելնելով ապահովագրական պատահարի վրա հասնելու օրը տվյալ արտարժույթի նկատմամբ չէ կենտրոնական բանկի կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքից:

23.8 Ապահովագրական հատուցման չափը նվազում է Ապահովագրի կողմից չվճարված ապահովագրվածների չափով:



ԳՈՒՅՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

23.9 Եթե Ապահովադրին հասցված վնասները հատուցել են երրորդ անձիք, ապա Ապահովագրողը վճարում է միայն Պայմանագրի համաձայն հատուցման ենթակա գումարի և երրորդ անձանցից ստացված գումարի տարբերությունը: Այդպիսի գումարներ ստանալու դեպքում Ապահովադիրը պարտավոր է դրանց մասին անմիջապես տեղյակ պահել Ապահովագրողին:

23.10 Ապահովադիրը ՊԱՐՏԱՎՈՐ Է Ապահովագրողին ԱՆՄԻՋԱՊԹԵՍ հայտնել հայտնաբերված այն գույքի մասին, որը կործանվել էր Ապահովագրական պատահարի արդյունքում: Նոր հայտնաբերված գույքի վերադարձման ժամանակ Ապահովադիրը ՊԱՐՏԱՎՈՐ Է Ապահովագրողին վերադարձնել վճարված ապահովագրական հատուցման համապատասխան մասը:

23.11 Գույքը փրկելու պարտականությունները կատարելու հետ կապված ծախսերը, եթե դրանք հավասար են փրկվող գույքի արժեքին, հատուցվում են Ապահովագրողի կողմից, նույնիսկ եթե այդ ծախսերը չեն եղել արդյունավետ (Կանոնների 14.1. կետ): Նշված ծախսերը հատուցվում են ապահովագրական արժեքի նկատմամբ ապահովագրական գումարին համամասնական չափով, անկախ այն բանից, որ հատուցման ընդհանուր գումարը կարող է գերազանցել ապահովագրական գումարը:

23.12 Մաքրման, քանդման (Կանոնների 14.2. ա) ենթակետ), տեղափոխման և պաշտպանության ծախսերը (սույն Կանոնների 14.2. ք) ենթակետ) հատուցվում են ապահովագրական արժեքի նկատմամբ ապահովագրական գումարին համամասնական չափով:

23.13 Կանոնների 14.2. կետում նշված բոլոր ապահովագրված ծախսերը հատուցվում են տվյալ ծախսերի կատարման փաստի հիման վրա:

23.14 Ապահովագրողն ազատվում է այն ծախսերի հատուցումից, որոնք առաջացել են Ապահովադրի հնարավոր կորուստները նվազեցնելու խելամիտ և հասանելի միջոցները դիտավորյալ չկիրառելու արդյունքում (համաձայն Կանոնների 22.1. ենթակետի):

23.15 Ապահովագրական հատուցումը վճարվում է այն անձին (Շահառուին), որի օգտին կնքվել է Պայմանագիրը:

23.16 *Ապահովագրողի կողմից ապահովագրական հատուցման մերժելու հիմք են հանդիսանում՝*

ա) Ապահովադրի, նրա ներկայացուցչի կամ Շահառուի կողմից պատահարի առաջացմանն ուղղված կանխամտածված անօրինական գործունեությունը, որը որակվում է դատարանի կամ քննչական մարմինների փաստաթղթերի համաձայն.

բ) Ապահովադրի կողմից ապահովագրության օբյեկտի վերաբերյալ դիտավորյալ ոչ հավաստի տեղեկություններ ներկայացնելը, բացառությամբ այն դեպքերի, որոնք էական նշանակություն չեն ունեցել ապահովագրական ռիսկի գնահատման համար.

գ) օրենքով, այլ իրավական ակտերով, Կանոններով կամ Պայմանագրով նախատեսված այլ դեպքեր:

23.17 Ապահովագրական հատուցման վճարման մերժումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

23.18 Ապահովագրական հատուցման վճարումը կարող է հետաձգվել, եթե Ապահովադրի, նրա ներկայացուցչի կամ Շահառուի նկատմամբ հարուցվել է քրեական գործ՝ կապված պատահարի առաջացման հետ, ինչպես նաև օրենքով, այլ իրավական ակտերով, Կանոններով կամ Պայմանագրով նախատեսված դեպքերում:

23.19 Ապահովագրողն ապահովագրական պատահարի մասին Կանոններում նշված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուց հետո 5 օրվա ընթացքում պարտավոր է օրենքի, այլ իրավական ակտերի և Կանոնների համաձայն ընդունել ապահովագրական հատուցումը վճարելու կամ մերժելու մասին եզրակացություն (որոշում):

23.20 Ապահովագրական հատուցում իրականացնելու մասին որոշում կայացնելու օրվանից 20 օրվա ընթացքում Ապահովագրողը պարտավորվում է միանվագ իրականացնել ապահովագրական հատուցումը, եթե Ապահովագրողը և Ապահովադիրը (Շահառուն) ապահովագրական հատուցման վճարման այլ կարգ կամ ժամկետ չեն համաձայնեցրել:

23.21 Ապահովագրական հատուցման վճարման օր է համարվում Ապահովագրողի հաշվարկային հաշվից կամ դրամարկղից դրամական միջոցների դուրս գրման ամսաթիվը:

23.22 Ապահովադրին (Շահառուին) ապահովագրական հատուցում վճարելու դեպքում ապահովագրական գումարը ինքնաշխատ կերպով նվազում է վճարված հատուցման չափով: Ապահովագրական գումարը համարվում է նվազեցված Ապահովագրողի կողմից ապահովագրական հատուցում վճարելու պահից: Ապահովագրական հատուցում ստանալուց հետո Ապահովադիրն իրավունք ունի լրացուցիչ ապահովագրավճարի դիմաց վերականգնել նախնական ապահովագրական գումարը:

23.23 Ապահովագրական հատուցման մերժման դեպքում, եզրակացության մեջ պետք է նշվեն մերժման պատճառները:

ԲԱԺԻՆ 24. ՓՈՐՉԱԸՆԹՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ, ՎՆԱՄԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

24.1 Ապահովագրողը կամ նրա կողմից լիազորված անձը կարող են կազմել վթարային հավաստագիր: Այդ նպատակով նրանք իրավունք ունեն ապահովագրական պատահարի հետ կապված լրացուցիչ տվյալներ հավաքագրել իրավապահ մարմիններից, պետական կառավարման մարմիններից կամ այլ անձանցից, որոնք տիրապետում են պատահարի առաջացման հանգամանքների մասին տեղեկատվություն:

24.2 Ապահովագրողը պատահարի առաջացումից հետո իրավունք ունի դիմելու անկախ փորձագետների՝ ապահովագրական պատահարի պատճառները բացահայտելու և վնասի չափը ճշտելու համար, ինչպես նաև ապահովագրական հատուցման չափը որոշելիս հիմնվելու վերջիններիս եզրակացությունների վրա:

24.3 Անհրաժեշտության դեպքում տեղի ունեցած պատահարի վերաբերյալ տեղեկություն ստանալու նպատակով Ապահովագրողը կարող է դիմել պետական մարմինների, կազմակերպությունների կամ այլ անձանց, ովքեր տիրապետում են ապահովագրական պատահարի վերաբերյալ տեղեկատվությանը:

24.4 Ապահովագրողն իրավունք ունի անձանք հետաքննելու և պարզելու ապահովագրական պատահարի հանգամանքները և պատճառները:

24.5 Ապահովադիրը նույնպես իրավունք ունի նշանակել փորձագետ-սյուրվեյթեր՝ վնասի ծագման պատճառները որոշելու և (կամ) դրա չափերը գնահատելու համար:

24.6 Պայմանագրի կողմերից յուրաքանչյուրը կրում է իր կողմից նշանակված փորձագետի (սյուրվեյթերի) ծառայությունների վճարման ծախսերը:

24.7 Այն դեպքում, երբ վեճի լուծման համար կողմերը ներգրավվում են միջնորդ կողմ, դրա հետ կապված ծախսերը պետք է հավասար ձևով կիսվեն Կողմերի միջև:

ԲԱԺԻՆ 25. ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ

25.1 Պայմանագրում կարող է սահմանվել չհատուցվող գումար (ապահովադրի մասնակցության չափ վնասի հատուցմանը), որն Ապահովագրողի և Ապահովադրի միջև համաձայնեցված գումար է կամ սահմանվում է ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսային հարաբերությամբ:

25.2 Չհատուցվող գումարը կարող է լինել պայմանական կամ ոչ պայմանական:

25.3 Պայմանագրում Պայմանական չհատուցվող գումար սահմանված լինելու դեպքում Ապահովագրողը ազատվում է ապահովագրական հատուցման պատասխանատվությունից, երբ ապահովագրական հատուցման գումարը չի գերազանցում Պայմանագրով սահմանված չհատուցվող գումարի չափը, և պարտավոր է վճարել ապահովագրական հատուցումն ամբողջությամբ, երբ ապահովագրական հատուցման գումարը գերազանցում է չհատուցվող գումարի չափը:

25.4 Պայմանագրում ոչ պայմանական չհատուցվող գումար սահմանված լինելու դեպքում Ապահովագրողը չհատուցվող գումարի չափով ազատվում է ապահովագրական հատուցում իրականացնելուց:



ԲԱԺԻՆ 26. ԿՐԿՆԱԿԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

26.1 Ապահովադիրը ՊԱՐՏԱՎՈՐ Է գրավոր կերպով տեղեկացնել Ապահովագրողին այլ ապահովագրողի հետ ապահովագրված գույքի նկատմամբ կնքված ապահովագրության բոլոր պայմանագրերի մասին: Միևնույն ժամանակ Ապահովադիրը ՊԱՐՏԱՎՈՐ Է նշել այլ ապահովագրական ընկերությունների անվանումները, որանց մոտ ապահովագրված գույքը, ապահովագրական շիսկերը և ապահովագրական գումարների չափերը:

26.2 Եթե Կանոնների համաձայն ապահովագրական հատուցման պահանջի ժամանակ գոյություն ունի այլ ապահովագրության պայմանագիր (վկայագիր), որով հատուցվում է նույն կորուստը, վնասը կամ պատասխանատվությունը, ապա Ապահովագրողը պարտավոր չի լինի հատուցել ավելին, քան ամեն մի կորուստի, վնասի կամ ծախսի համար իր համամասնական բաժինը:

26.3 Եթե կրկնակի ապահովագրությունը Ապահովադիրի կողմից հանդիսացել է դիտավորության հետևանք, ապա Ապահովագրողն իրավունք ունի պահանջել անվավեր ճանաչելու Պայմանագիրը և հատուցելու Ապահովագրողին պատճառված վնասները:

ԲԱԺԻՆ 27. ՈՉ ԼՐԻՎ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

27.1 Եթե պարզվի, որը ապահովագրական պատահարը տեղի ունենալու օրն ապահովագրական գումարը փոքր է ապահովագրական արժեքից, ապա Ապահովագրողն հատուցում է Ապահովադիրին իր կրած վնասների մի մասը՝ ապահովագրական պատահարը տեղի ունենալու ամսաթվին ապահովագրական գումարի և ապահովագրական արժեքի հարաբերակցությանը համամասնորեն, եթե Կողմերը այլ բան չեն նախատեսել:

27.2 Եթե դա ուղղակիորեն նշված է Պայմանագրում, առանձին ունեցվածքը և (կամ) ծախսերը կարող են ապահովագրվել «առաջին շիսկի» պայմանով: Այդ դեպքում, ապահովագրված գույքի (ծախսերի) նկատմամբ ապահովագրական հատուցման գումար սահմանելիս հաշվի չի առնվում դեպքը տեղի ունենալու ամսաթվին ապահովագրական գումարի և ապահովագրական արժեքի հարաբերակցությունը:

ԲԱԺԻՆ 28. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ԱՅԼ ԱՆՁԻՆ ՓՈԽԱՆՑԵԼԸ

28.1 Ապահովագրված գույքի նկատմամբ իրավունքների այն անձից, ում օգտին կնքվել է Պայմանագիրը, այլ անձի փոխանցման դեպքում, այդ Պայմանագրով իրավունքները և պարտականությունները անցնում են այն անձին, որին անցել են տվյալ գույքի նկատմամբ իրավունքները, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գույքի բռնագանձման կամ բռնագրավման արդյունքում սեփականատիրոջ փոփոխման դեպքերի:

28.2 Անձը, ում անցել են ապահովագրված գույքի նկատմամբ իրավունքները, պարտավոր է անհապաղ, գրավոր կերպով այդ մասին տեղեկացնել Ապահովագրողին:

28.3 Սակայն եթե փոխանցվում (վաճառվում) է ապահովագրված գույքի միայն մի մասը, որը ապահովագրության նպատակներով չի ստեղծում առանձին օբյեկտ, ապա պայմանագրով նախատեսված ապահովագրությունը չի տարածվում այդպիսի օբյեկտների վրա:

28.4 Եթե ապահովագրված օբյեկտների փոխանցման (վաճառքի) արդյունքում, ապահովագրական պատահարի վրա հասնելու ռիսկն աճում է, ապա այդ դեպքում կիրառվում են ռիսկի մակարդակի աճի վերաբերյալ Կանոնների ընդհանուր դրույթները:

ԲԱԺԻՆ 29. ՍՈՒԲՐՈԳԱՑԻԱ

29.1 Ապահովագրական հատուցում վճարելուց հետո հատուցված գումարի սահմաններում Ապահովագրողին են անցնում Ապահովադիրի (Շահառուի) պահանջի իրավունքը, որը նա ունի Ապահովագրողի կողմից հատուցված վնասի պատճառման համար պատասխանատու անձի նկատմամբ:

29.2 Ապահովադիրը (Շահառուն) ՊԱՐՏԱՎՈՐ Է Ապահովագրողին փոխանցել բոլոր փաստաթղթերը և ապացույցները, ինչպես նաև տրամադրել նրան բոլոր տվյալները, որոնք անհրաժեշտ են Ապահովագրողին փոխանցված վնասի պահանջի իրավունքն իրականացնելու համար:

29.3 Եթե Ապահովադիրը ՀՐԱԺԱՐՎԵԼ Է Ապահովագրողի կողմից հատուցված կամ հատուցվելիք վնասների համար պատասխանատու անձի նկատմամբ ՊԱՀԱՆՁԻ ԻՐ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ կամ այդ իրավունքի իրականացումը ԱՆՀՆԱՐԻՆ Է ԴԱՐՁԵԼ Ապահովադիրի (Շահառուի) մեղքով, ապա Ապահովագրողը լրիվ կամ համապատասխան չափով ԱԶԱՏՎՈՒՄ Է ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՅՈՒՄ ՎՃԱՐԵԼՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԻՑ, իսկ ապահովագրական հատուցումը արդեն վճարված լինելու դեպքում Ապահովագրողն իրավունք ունի պահանջել Ապահովադիրից (Շահառուից) ետ վերադարձնելու ավելորդ վճարված ապահովագրական հատուցման գումարները:

ԲԱԺԻՆ 30. ԾԱՆՈՒՅՈՒՄ

30.1 Բոլոր ծանուցումները, որոնք Ապահովադիրը պետք է իրականացնի Կանոններին և (կամ) Պայմանագրի այլ պայմաններին համապատասխան, պետք է հաստատվեն գրավոր ձևով, եթե այդ ծանուցումները կատարվել են բանավոր, հեռախոսով, հեռագրով կամ այլ միջոցներով: Ծանուցման ամսաթիվ ասելով հասկանում ենք այն ամսաթիվը, որով ստացվել է ծանուցումը:

30.2 Պայմանագրի բովանդակությանը վերաբերող Համաձայնությունները, վավերական են միայն այն դեպքում, եթե դրանք կատարվել են գրավոր ձևով:

ԲԱԺԻՆ 31. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

31.1 Պայմանագրի գործողության ընթացքում առաջացող բոլոր վեճերը լուծվում են Պայմանագրի Կողմերի միջև անմիջական բանակցությունների միջոցով: Բանակցությունների միջոցով համաձայնություն ձեռք չբերելու դեպքում, վեճերը լուծվում են դատական կարգով՝ օրենքին և այլ իրավական ակտերին համապատասխան:

31.2 Վիճելի հարցերի լուծման ժամանակ Պայմանագրի դրույթները գերակա են Կանոնների դրույթների նկատմամբ:

31.3 Վեճերի առաջացման դեպքում Կանոններով չկարգավորված հարցերը կարգավորվում են օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով: